



Թիվ: 8/ 11/ 2000
Համար: 2-2685

«Լոյս» Երկչաբաթերթի Յարգարժան Խմբագրութիւն
Թերան-Իրան

Ձեր թիւ 15, Հոկտ. 31, 2000 թւական համարի չորրորդ էջում՝ «Դասեր վերցնենք 12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւններից» ակնարկում շօշափել էիք հարցեր, որոնց ԸԿՅ նախքան իր հրատարականի ներկայացումը՝ ԹՎԹ Թեմական Խորհրդին ցանկանում է պատասխանել, վերանայելու համար այն անհիմն կասկածները, որը կարող է ստեղծի մեր սիրելի ժողովրդի մօտ:

Նախ պիտի բացատրել, որ ամէն մի գործող մարմին բնականաբար սխալներ է գործում, որից գերծ չէինք նաե մենք: Ժողովրդի համար չգործող է բանբաստղն է որ սխալ չի գործում երբէք:

Հաւանական սխալները կանխելու համար մշակում են օրէնքներ եւ կանոններ նազագոյնի իջեցնելու համար պատահական թերութիւնները:

Այդ մշակած օրէնքները եւ կանոնները ընտրութիւնների ընթացքի եւ ընտրութեան օրայ վերաբերեալ մշակել էր ԸԿՅ կողմից խորհրդակցելով Թերան քաղաքի կուսակալութեան փորձաշու պատասխանատուների հետ, որը հաստատելուց յետոյ յանձնել էր մամուլի ներկայացուցիչներին՝ այդ թում նաե Ձեզ, ենթայանձնախմբերին եւ սնդուկների վրայ հաստատած կազմերին:

Ըստ այդ կանոնների Ձեր ակնարկի 1, 2, 3, 4, 5 եւ 6-րդ կէտերով մատնանշած վրիպումները պէտք է նոյն օրը եւ նոյն ժամին տեղեկացւէր սնդուկների վրայ հսկող անդամներին, որոնք իրենց կրծքի նշաններով սպասարկում էին ժողովրդին, այդ թում՝ Սնդուկի կազմի պատասխանատու, Կրթօրհան կարիքի հսկիչներ, Թերան քաղաքի կուսակալութեան ներկայացուցիչ ու նաե թեկնածուների ներկայացուցիչներ:

Առ ի տեղեկութիւն Ձեզ, ի բաց առեալ Թերան քաղաքի կուսակալութեան մէկական ներկայացուցիչները ամէն մի սնդուկի վրայ, նոյն կուսակալութեան հինգ շրջիկ հսկիչներ օրայ ընթացքում շրջում էին տարբեր սնդուկների կենտրոնները եւ ստուգում էին շրջապատը, կանխելու համար հէնց 1-ից 6-րդ կէտերում մատնանշած հարցերը:

7-րդ կէտի վերաբերեալ Ձեր մատնանշումը նաե կատարել է կուսակալութեան ներկայացուցչի կարգադրութեամբ տարբեր կենտրոններում սահունացնելու համար հաշարկման ընթացքը:

Ձեր ուշադրեանն ենք յանձնում, որ սնդուկների անձնակազմերը բաղկացած էին մեր համայնքում աշխատող բոլոր միութիւններից եւ աշխատող մարմիններից, որոնց հրկում էին թեկնածուների եւ Կրօնական խորհրդի ներկայացուցիչները, յատկանշելի է այդ բոլորին հսկում էին ԸԿՅ եւ Թերան քաղաքի կուսակալութեան անձնակազմը մէկական ներկայացուցիչով ամէն մի սնդուկում, հինգ շրջում ներկայացուցիչներ եւ Կուսակալի օգնական քաղաքական եւ կարգապահական բաժնում իր երեք օգնականներով: Այս բոլորից յետոյ ի՞նչքան արդարացի էր կասկածներ յարուցելու այդքան թափանցիկ եւ յաջող ընտրութիւնների մասին մեր ժողովրդի մօտ:

Սպասում էր նախքան ընտրութիւնները, որպէս մամուլ մեր ժողովրդին ուղղութիւն տայիք որ, եթէ սխալներ է նկատում, յարգելով օրէնքները դիմեն պատասխանատու անձանց ո՛չ թէ ընտրութիւններից յետոյ բանբասանքի կարգով հարցեր արձարծէիք:

Վերջում պիտի նշել, որ բոլոր սպասարկողների կողմից նկատած օրինախախտումները անմիջապէս կանխել եւ ընտրութիւնները իր բնականոն ընթացքի մէջ է դրել:

ՅԱՐԳԱՆՕՔ՝

ԹՎԹ 12-րդ ՊԺ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

Խախտումներ եղել են

Այսու հարկ ենք համարում մատնանշել մի քանի հարցեր Թերանի Հայոց Թեմի 12-րդ Պատգամատրական Ժողովի Ընտրական Կենտրոնական Յանձնախմբի կողմից մեզ յղած գրութեան առընչութեամբ:

Նախ պիտի խոստովանենք, որ Ը.Կ.Յ-ը այս մի քանի ամիսների ընթացքում բաւական աշխույժ աշխատանք է տարել, ինչքան աւելի ժողովրդական ընտրութիւններ անցկացնելու համար, որը բարձր գնահատելով, նաե շնորհակալութիւն ենք յայտնում Ը.Կ.Յ-ի անդամներին առանձին-առանձին: Ապա պիտի նշենք, որ «Լոյս»-ի համար 15-ում տպագրած «Դասեր վերցնենք 12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւններից» ակնարկում, ամենեւին էլ չէր մեղադրում Ը.Կ.Յ-ը՝ կատարած խախտումների համար, այլ միայն կատարածի մասին էր խօսք գնում եւ որոշ խմբակցութիւնների եւ անհատների կողմից դրսետրած գործունէութիւնն ու արարքն էր անդրադարձ գտել, որին արդէն թերանահայի աչքերը արեւտաւարծ է եղել մանաւանդ այս վերջին երկու տասնամեակների ընթացքում:

Այժմ մի քանի նկատողութիւններ.

1. Յօդածը գրել էր որպէս կատարած մի իրականութիւն ու փաստ եւ ինչպէս վերնագիրն էր՝ «Դասեր» եւ ոչ թէ բողոք կամ գանգատ:

2. Դուք հէնց Ձեր վերոյիշեալ գրութեան մէջ ընդունել էք, որ սխալներ են կատարել: (Գրել էք, որ «ամէն մի գործող մարմին բնականաբար սխալներ է գործում»):

3. Գրութեան մէջ նշել էր, որ «Այդ մշակած օրէնքները եւ կանոնները ընտրութիւնների ընթացքին եւ ընտրութեան օրայ վերաբերեալ մշակել էր Ը.Կ.Յ-ի կողմից», այստեղ հարց է առաջանում, որ արդե՞օք Ը.Կ.Յ.-ը իրաւասու է օրէնք մշակելու, քանի որ օրէնքի մշակումը վերապահում է օրէնսդրական մարմիններին, այն է Պատգամատրական Ժողովը:

4. Գրութեան երկրորդ էջում արդէն հաստատել էք, որ «Լոյս»-ի յօդածի 7-րդ կէտը ճիշտ է, այդ խախտումը տեղի է ունեցել:

5. «Լոյս»-ի յօդածում նշած 1,2,3,4,5, եւ 6-րդ կէտերով կատարած խախտումների մասին, մէկ առ մէկ տեղեկ են պահել քէտտուփերի հսկիչ կազմերի նախագահներին, նոյնիսկ կառավարութեան ներկայացուցչին, նոյն օրը, նոյն պահին, որոնց մասին գոյութիւն ունեն բազմաթիւ վկաներ եւ իրենց պատասխանատու անձինք: Ոորշ թեկնածուներ նաե բողոքել են միեւնոյն պահին:

Նոյնիսկ յիշատակած քարտերը որոնք անօրինաբար դրած էին քէտտեղանների վրայ, վերցւել են ոստիկանութեան կողմից, անգամ երկու օրինախախտողներ նկատել եւ յանձնել են պատասխանատու մամիւններին:

Այս դէպքերի մասին մենք շփոք չառաջացնելու պատճառով պատեհ չենք համարում մանրամասներ ներկայացնել այստեղ, սակայն պատրաստ ենք ցանկութեան դէպքում կատարած խախտումների մասին ներկայացնել իրական եղելութիւնը: Բացի նշած թերութիւններից, եղել են նաե այլ օրինակներ, որոնց յարմար չենք գտնում ներկայացնել:

6. Այս ամէնով յանդերձ, ցատում ենք, որ Ը.Կ.Յ.-ը տեղեկ չի եղել իրականութեան մասին, նաե ցատում ենք, որ իր գրութեան մէջ պահպանել է «սառը պատերազմեան» ոճը, որը արդէն վնասել է հնացել եւ պատմութեան գիրկը անցել:

7. Համայնքը սպասում էր, որ Ը.Կ.Յ.-ը կը կատարի իր որոշումը եւ ընտրութիւններից յետոյ կը հրախփի մամուլի աւտոլիս, որը ցաւօք տեղի չունեցաւ եւ մենք հէնց այդ պատճառով պարտաւորեցինք տպագրել այդ ակնարկը:

8. Այստեղ կրկին հարց է առաջանում, որ նկատելով այդ ակնարկը բոլորովին էլ չէր վերաբերում Ը.Կ.Յ.-ին այդ գրութեան մէջ ո՞ւմ շահերն էին պաշտպանում: Այդ մենք եւ դուք շատ լաւ գիտենք:

Ճար էջ 5-ում

Է՞՞ն՝ Կ՞՞ն՝ Ն՞՞ն՝ ՍԾ՞՞ն՝ Ս՞՞ն՝ Օ՞՞ն

Պաշտօնական ընթրիք, մանրատների յանձնում.- Նոյեմբերի 14-ին ՉՀՀ միութեան սրահում տեղի ունեցաւ 11-րդ շրջանի Պատգամատրական Ժողովի պատգամատրների եւ 12-րդ շրջանի նորընտիր պատգամատրների հանդիպում, որտեղ մասնակցում էին նաեւ ԸԿՅ-ի անդամները եւ մի շարք ազգային մարմինների պատասխանատուներ:

Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Տէր Սեպուհ Եպիսկ. Սարգստեանի աղօթքից յետոյ ելոյթ ունեցաւ 11-րդ ՊԺ-ի դիւանի ատենապետ՝ դոկտ. Հարմիկ Դաւթեանը: Նա իր ելոյթում օգտւելով անցեալի փորձառութիւնից շեշտեց, որ մեր բոլոր գործերը պէտք է ընթանան ըստ մեր կանոնադրութեան: Նա սասց.- Այնտեղ որ յենել ենք կանոնադրութեան վրայ, գործերը լաւ են առաջ գնացել, իսկ այնտեղ որ չենք կառչել կանոնադրութիւնից՝ սխալներ շատ ենք թոյլ տուել: Նա խորհուրդ տուեց 12-րդ ՊԺ-ի անդամներին՝ ըստեղծել տարբեր յանձնախմբեր, ցուցաբերել մասնագիտական մօտեցումներ եւ յենել ուսումնասիրութիւնների վրայ, որպէսզի աշխատանքները ճիշտ եւ սահման ստացուին:

Այնուհետեւ ԸԿՅ-ի առաջին ատենապետ՝ պրն. Թոմիկ Սարոխանեանը, իր ելոյթում նշեց, որ երկար տարիներ է, որ մենք նման աշխատանքներով չենք զբաղուել, մեր կանոնադրութիւնը պէտք է վերանայի եւ ուսումնասիրի: Նա իր յատուկ շնորհակալական խօսքն ուղղեց Թեմի եմֆայանձնախմբերին: Այնուհետեւ 12-րդ ՊԺ-ի կողմից ելոյթ ունեցաւ նոր պատգամատր՝ պրն. Արամայիս Ներսիսեանը: Նա յոյս յայտնեց նորընտիր պատգամատրները իրենց բոլոր կարողութիւնները կը ներդնեն համայնքի հարցերի լուծման գործում: Վերջում ելոյթ ունեցաւ Սրբազան Հայրը եւ շեշտեց, որ այսուհետ բոլոր նոր պատգամատրները համարուում են Թեհրանի Հայոց Թեմի պատգամատրներ եւ ոչ թէ որեւէ միութեան կամ խմբի անդամներ: Նա նշեց, որ մինչ այժմ նման մի դեմոկրատիկ ընտրութիւն չի եղել եւ բարձր գնահատեց ընտրութեան կազմակերպումն ու իրագործումը:

Վերջում նոր պատգամատրներին յանձնեցին նրանց մանդատները :

12-րդ Պատգամատրական Ժողովի անդրանիկ նիստը գումարեց.- Սոյն թիւկանի Նոյեմբերի 17-ին Ազգային Առաջնորդարանում՝ ժամը 16-ին գումարեց նորընտիր պատգամատրների առաջին նիստը: Ներկայ էին Սրբազան Հայրը, նորընտիր պատգամատրները, 11-րդ ՊԺ անդամները, Թեմական Խորհրդի անդամները, ՆԳ Նախարարութեան փոքրամասնութիւնների պատասխանատու՝ տիկ. Թաւադոյին, քաղաքապետարանի ներկայացուցիչ պրն. Բոմիջանին, Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի պատասխանատու՝ պրն. Ռոբերտ Մարգարեանը եւ «Այիք» օրաթերթի թղթակիցները: Նորընտիր 55 պատգամատրներից բացակայում էին՝ երեքը:

Սրբազան Հօր բացման խօսքից յետոյ հրաւիրուեցին ամենաերեց եւ ամենակրտսեր պատգամատրներ՝ պրն. Արամայիս Ներսիսեանը եւ պրն. Գեղիկ Վարդանեանը անդրանիկ նիստը վարելու համար: Նիստի ընթացքում վարեցուցեց մանդատների օրինադրութիւնը: Վերջում օրակարգի նիւթ դարձաւ մնայուն դիւանի ընտրութեան հարցը:

Զեւարկութեան արդիւնքում Ռուբիկ Կարապետեանը ընտրուեց, որպէս առաջին ատենապետ, Արտաւազ Բաղումեանը՝ երկրորդ ատենապետ, Միշա Հայրապետեանը՝ առաջին ատենադպիր եւ Հիլդա Մարգարեանը՝ երկրորդ ատենադպիր:

Ժողովի դիւանը իր շնորհակալական խօսքն ուղղեց ԻՆԳ նախարարութեանը: Ընթերցուեց Արամ Վեհափառի ողջոյնի խօսքը՝ Տ. Սեպուհ Սարգստեանին, որը վերաբերում էր 12-րդ ՊԺ ընտրութիւններին, եւ մանաւանդ դրա յաջող ընթացքին: Սրբազան Սարգստեանը ընդառաջելով պատգամատրներից մէկի առաջարկին, խոստացաւ այն բազմացնել եւ պատգամատրների տրամադրութեան տակ դնել:

Ներքին կանոնադրութեան մասին տեղեկացուեց, որ մինչ այժմ նման կանոնադրութիւն գոյութիւն չի ունեցել եւ աշխատանքները ընթացել են ըստ փորձառութեան եւ ընդունած նորմերի:

Առաջարկ եղաւ, քանի որ թեմի մայիսին կանոնադրութիւնը կազմելիս, նկատի է առնուել նաեւ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցու կանոնադրութիւնը, ուստի եթէ հնարատր է այն բազմացնել եւ պատգամատրների սեփականութիւնը դարձնել: Սրբազան հայրն պատասխանեց,- Մեր թեմի կանոնադրութիւնը հաստատուած է Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքների վրայ: Անցեալում եղած է երկու Սահմանադրութիւններ, մէկը 1936-37 թթ., որը հիմնուած է եկեղեցական յունաստանական կառավարող եկեղեցիների հիմքերի վրայ, այսինքն գերագոյն մարմնում աշխարհականների մասնակցութիւնը սահմանափակուած է: Վազգէն Ա-ի ժամանակ մի նոր կանոնադրութիւն ընդունեց՝ 1986 թ.-ին: Ըսել կուզեմ, Վազգէն Ա-ի ժամանակ ժողովրդավարական սկզբունքներով նոր կանոնադրութիւն պատրաստուած ենք: 1992-ից Ազգային Ընդհանուր Ժողովի մէջ՝ Անթիլիասում վարեցուցեց մի կանոնադրութիւն, որտեղ Իրանից նաեւ մասնակցում էին 7 պատգամատրներ, որոնց շարքում էր նաեւ պրն. Ռուբիկ Կարապետեանը: Որոշուեց ամէն տեղ, բոլոր մեր կանոնադրութիւնը պէտք է հիմնուած ըլլան հիմնական այդ սկզբունքներով վրայ, այսինքն ազգային եւ ժողովրդավար սկզբունքներով վրայ, որպէսզի ժողովրդի լայն մասնակցութիւնը ապահովի ազգային, եկեղեցական կեանքում: Հիմա կարելի է այդ կանոնադրութիւնը բազմացնել եւ տրամադրել բոլորին: Յետագայում կարելի է դրա մասին հարցազոյցի ձեւով գանք եւ խօսենք այդ առթիւ եւ կարծիքների փոխանակում ունենանք: Պայմանների բերումով կարելի դրանց որոշ չափով փոփոխել:

Այնուհետեւ օրակարգում քննարկուեց որոշ հարցեր, այդ թում թեմի կանոնադրութեան բազմացումը եւ պատգամատրներին տրամադրելը եւ անհրաժեշտ յանձնախմբերի (կրթական, Ֆինանսական, մշակութային եւ այլ) ստեղծումը:

Արարատ կազմակերպութեան «Արիփա» երգչախումբը ելոյթ ունեցաւ.- Սոյն թիւկանի նոյեմբերի 16-17-ին Հ.Մ.Ա.Կ.-ի «Արիփա» երգչախումբը իր տարեկան համերգը ներ-



կայացրեց: Դա ներած էր Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին: Երգչախումբը կատարեց Կոմիտասի, Եկմալեանի, Կանաչեանի, Տիգրանեանի, Մոցարտի եւ մի շարք երգահանների ստեղծագործությունները: Յատկանշելի է, որ ծրագրին մաս էր կազմում պարսիկ երգահան Բաղչեբանի ստեղծագործությունը: Երգչախումբը ղեկավարում էր Ռազմիկ Օհանեանը:

Թղթակցութիւնը՝ Անի Նազարեանցի

Թ՛ՀԹ «Հայերենագիտական Երեկոյեան Դասընթացների» ատարականների յանձնում.- Մոյն քաղաքի նոյեմբերի 13-ին Թեհրանի Հայոց Ակումբում տեղի ունեցաւ 1997-2000 քաղաքացիների, Հայերենագիտական Երեկոյեան Դասընթացների մասնակիցների ատարական յանձնարարման ձեռնարկ:

«Հայ կին» միութեան նախագահուհի տիկ. Արրահամեանի բացման խօսքից յետոյ, ելոյթ ունեցաւ Թեհրանի քեմի Առաջնորդ Տ. Մեպուի եպիս. Սարգսեանը: Գերաշնորհ Մըրթազան Հայրը բարձր գնահատեց նոյնաման ծրագրերը, եւ դրանք համարեց հայապահպանման երաշխիքներ:

Ծրագիրը շարունակեց գեղարեստական բաժինը, որում ելոյթ ունեցան Արարատ կազմակերպութեան «Արփա» երգչախումբը եւ անհատ ասումընթացներ:

Վերջում Մրթազան Հօր ձեռամբ է տիկ. Բաբումեանի միջոցով ատարականներ յանձնեցին ուսանողուհիներին:

Թղթակցութիւնը՝ Թամիկ Քեշիշեանի

ԱԷ՞Ն Յ

Ցարակցութիւն Իրանի հանրաժանօթ, բանաստեղծ՝ Ֆերէյրուն

Մօշիքիի մահուան առիթով (Իրան օրաթերթ 29.10.00).- Իրանի Գրողների Միութիւնը մի յայտարարութեամբ իր ցարակցութիւնը յայտնեց հանրայայտ եւ սիրած բանաստեղծ՝ Ֆերէյրուն Մօշիքիի մահուան կապակցութեամբ:

Իրանի խորհրդարանում կանանց Ֆրակցիոն է կազմում (Համաքաղաքացի օրաթերթ 29.10.00).- Ֆաթեմէ Ռաքէյի խօսքերով Իրանի Իսլամական համակարգում կանայք իրենց արժանի տեղին հասնելու համար Ի Ի-Հ խորհրդարանում ստեղծել են «Կանանց Ֆրակցիոն»: Նա նկատել տեց, քանի որ ԻԻԽ գոյութիւն չունի կանանց հարցերով յատուկ յանձնախումբ, ուստի անհրաժեշտ էր զգացում «Կանանց Ֆրակցիոնի» գոյութիւնը:

Օտարները մտադրել են Իրանից փախցնել մտաւոր ուժերին (Համաքաղաքացի օրաթերթ 11.10.00).- Իրանցի պրոֆեսոր Ֆազլ Օլլահ Ռեզան, որն դասաւանդում է Կանադայի «Մակ Քիլ» համալսարանում յայտնել է, որ աշխարհի զարգացած երկրները մտադրել են իրանցի ուշիւն եւ մտային ուժերին ներգրաւել:

Իրանի խորհրդարանը զբաղում է նաեւ օդերեւոյթաբանական հարցերով (Իրան օրաթերթ 07.10.00).- Այս կապակցութեամբ 90-րդ յօլուածի գործադիր յանձնախմբի նախագահ պրն. Մոհամմադ Ռեզա Թաբեշը ասաց, որ Թեհրանի կենտրոնարտային աղտոտուածութեան պատճառը 70 տոկոսով վերաբերում է ատոմէքեաներին, դրանց 50 տոկոսը բաժին է ընկնում հին եւ շարքից դուրս եկած ինքնաշարժերին, 25 տոկոսը ներքին արտադրած մեքենաների վառելանիւթի ոչ կանոնաւոր օգտագործման, եւ 25 տոկոսն էլ երթեւեկութեան արդի գիտութեան բացակայութեան հետեւանք է: Նա շեշտեց, որ խորհրդարանը զբաղւելու է այդ հարցով հասած բողոքներով:

Իրանաբնակ Ֆիլիպինցի նկարչուհի՝ տիկ. Քրիստինէ Աքբարի Օրասիոնի հերթական ցուցահանդէսը.- Մոյն քաղաքի սեպտեմբերի 29-ին տիկ. Քրիստինէի նկարների



29-րդ ցուցահանդէսն էր: Այս անգամ ցուցադրութիւնը կազմակերպւած էր այլազգի այցելողների համար, որոնց թում էին նա-

եւ հայեր:

Ցուցադրող նը-մուշներն աչքի էին ընկնում իրենց նրբերանգ գոյներով (ծաղիկներ, բնապատկերներ, ման-բանկարներ): Ուշադրութեան ար-ժանի էին տիկ. Քրիստինէի մանրա - նկարչութիւնները



Քրիստինէի մանրա - նկարչութիւնները ընդ-րիստոնեական թեմաներով: Տեղեկացանք, որ տիկ. Քրիստինէի բազմաթիւ աշակերտների թում կան նաեւ հայեր, որոնց նկարների ցուցադրութիւնը նը-կարչուհին ծրագրել է ասպազայում:

Կենդանու մսի արտահանութիւնը ազատ յայտարարեց Իրանում (Իրան օրաթերթ 07.10.00).- «Չախաղ Մազանդեզի» նախարարութիւնը կենդանու մսերէնի արտահանութիւնը ազատ է յայտարարել: Այդ գործի համար պէտք է նկատի առնի միայն վերոյիշեալ նախարարութեան կողմից կազմւած կանոնադրութիւնը: Մրա բացթողումը թոյլատրւելու է այն մաքսատներից, որոնք այդ կենդանիների համար «Կարանտինի» յարմարութիւններ ունեն:

ԾՅ Խ Է՞Ի Յ Կ

Իրանի մասնաւոր ցուցահանդէսը իր աշխատանքը սկսեց Երեւանում.- Մոյն քաղաքի նոյեմբերի 17-ին Երեւանում բացեց ԻԻ-Հ 7-րդ մասնաւոր ցուցահանդէսը: Բացման հանդիսութեանը ներկայ էին ՀՀ վարչապետ՝ Անդրանիկ Մարգարեանը, Երեւանի քաղաքապետ՝ Ալբերտ Բազէյեանը, Իրանի Արդիւնաբերութեան նախարարի տեղակալ՝ Արդուբեգ Մեփահվանդը, եւ նոյն նախարարութեան արտածումների բաժնի ընդ-

հանուր տնօրէն՝ Ահմադ Ղասեմին, նաեւ Իրան-Հայաստան Առևտրա-



կան Պալատի նախագահ՝ Լեւոն Ահարոնեանը:

Ցուցահանդէսին մասնակցել են իրանական աւելի քան 40 արդիւնաբերական եւ առևտրական ընկերութիւններ: 2200 քմ. տարածքում, մասնակցող արդիւնաբերողները ցուցադրութեան են դրել իրենց արտադրանքները:

Այնտեղ ներկայացւած են՝ մեքենաշինութեան արդիւնաբերութիւններ, սննդամթերք, հագուստ, լւացքափոշիներ, բժշկական, էլեկտրոնիկ սարքեր եւ իրեր: Ցուցահանդէսը կազմակերպել է Իրան-Հայաստան Առևտրական Պալատը Իրանի Արդիւնաբարական նախարարութեան հովանաւորութեամբ:

Տխուր, տխուր Ամերիկա (Ազգ օրաթերք 11.08.00).- Հայաստանի ժողովրդական արտիստ Վլադիմիր Արաջեանի տըպատրութիւններից Ամերիկա կատարած այցից,- «Գիտես ամէն ինչի մէջ տխրութիւն կար, կարօտ կար... Չարմանալի մարդ



ենք: Նիւթականի պակասութիւնից, էլ չգիտեն ինչի պակասութիւնից նեղում, տուն ու տեղ, պապի նկար ու թռան օրօրոց ծախում, գնում ենք: Դժար է, հասկանում ես, դժար: Այնտեղ մի քա-նիսը ուտելու բան ունեն, բայց բոլորը չէ, որ նորմալ են ապրում (խօսքս նիւթականի մասին է): Իրենց հա-յեցիութիւնն են կորցնում, հայի վա-րքըն ու բարքը, մնանում են ամերի-կացու: Չես հասկանում ո՞ւմ հետ ես նստում, ո՞ւմ հետ վեր կենում... Էս երկիրը հօր է, գիտես, ամէն ինչ ունի, բայց չես

հասկանում ո՞ւմ համար է այս ամէնը, ինչի՞ համար է...»

Այս էլ երկրորդ անգամ Վլադիմիր Արաջեանին հանդիպում են հենց Մ.Նահանգներից վերադառնալուց յետոյ: Ու երկրորդ անգամ այս շքեղ ու հարուստ երկիրը Վլադիմիր Արաջեանին անչափ տխուր մի տարածք է երևացել: «Գիտես տանը հայերէն են խօսում, բայց դպրոցում, փողոցում արդէն անգլերէն է: Չգիտես այս երեխաների վիճակն ի՞նչ է լինելու: Ամենաուշը մէկ երկու սերունդ յետոյ հայերէնը կը մոռանան, ամէն հայեցի բան կը մոռանան...»

Միերը հայ-պարսկական ակումբ է (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 16.07.00).- Վերջերս Երևանում իր ծնունդն աւտեց հայ-պարսկական «Միեր» մշակութային ակումբը, որի հիմնադրումը քաջալերեց եւ սատարեց ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատունը: Նշել է, որ «Միեր» ակումբի շուրջ համախմբւած են այնպիսի գործիչներ (մշակոյթի, գիտութեան, արեստի), որոնք լիովին տիրապետում են հայ-պարսկական վարճական յարաբերութիւնների բոլոր բարեմասնութիւններին, քաջատեղեակ են այն բոլոր ժամանակագրական անցքերին ու իրադարձութիւններին, որոնց բովոյ անցել է երկու դրկից, բախտակից ժողովուրդների ճակատագիրը:

Քաղաքակրթութիւնների երկխօսութեան գաւաթ. (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 01.09.-00).- «Քաղաքակրթութիւնների երկխօսութեան գաւաթ» նշանաբանի ներքոյ մայրաքաղաքի «Գիմամօ» մարզադահլիճում մեկնարկւեց մինի-Ֆուտբոլի միջազգային մարզաշար Հա-



յաստանում հաւատարմագրւած Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իրանի դեսպանութիւնների ներկայացուցիչների միջեւ: Մրցաշա-

րին մասնակցեց նաեւ Հայաստանի լրագրողների թիւր:

Թուրք ազգ մը գոյութիւն ունի՞ արդեօք (ՀՀ օրաթերք 23.08.00).- Սա մի գիրք է, որի աշխատութիւնը նւիրւած է հարցերի գիտական վերլուծմանը, եւ երկարատեւ պատմական ուսումնասիրութիւնների արդիւնք է: Հեղինակը ներկայացնում է այսօրայ Թուրքիայի Հանրապետութեան ժողովրդի ծագումնաբանութեան պատմական մանրամասները: «Թուրք ազգ», «Թուրքիա», «Թուրքիայի Հանրապետութիւն», «Աղբրեջանցի Ազգ» եւ «Աղբրեջանի Հանրապետութիւն» անունների պատմական ձեւաւորման մանրամասներն է նաեւ ներկայացրել Պետրոս Չարդարեանը: Աշխատութեան կարեւոր մաս է կազմել «Կլայութիւններ» բաժինը:



ՀՀ նոր նամականիշներ (ՀՀ օրաթերք 01.09.00).- Հայաստանի Հանրապետութեան Տըրանսպորտի եւ Կապի նախարարութիւնը փոստային շրջանառութեան մէջ է դրելու հետեւեալ նամականիշները:



ՅԷԶ 1/4 1 2 ՍԷՍ

Իտալիայի Խորհրդարանը որդեգրեց Հայոց Ցեղասպանութեան բանաձեւը.- Սոյն քականի, նոյեմբերի 17-ին Իտալիայի խորհրդարանը գերակշիռ մեծամասնութեամբ որդեգրեց Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչող մի բանաձեւ:

Վերոյիշեալ բանաձեւը առաջարկել էր Իտալիայի «Ֆորզա Իտալիա» կուսակցութիւնը, որի ղեկավարն է Ջիանկառլո Պազլիարինին: Բանաձեւում Թուրքիայից պահանջւում է՝ ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը:

Երեք ժամ խորհրդակցությունից յետոյ, բաց քվեարկութեամբ, բոլոր կուսակցությունները կողմ են քվարկել: Դեմ է քարկել միայն տեղի Կոմկոմիտեական կուսակցությունը, որը գտնուում էր բանաձեւը գրել է մեղմ: Վերջինիս կողմից առաջադրուած բանաձեւում ոճիրը գործադրող կողմից (Թուրքիա) պահանջուում է. «Երկխօսութիւն սկսել Հայաստանի հետ, յատկապէս վերահաստատելով դիւանագիտական եւ առեւտրական բընականոն յարաբերութիւններ, երկու կողմերի միջոց եւ վերացնել ներկայում հաստատուած շրջափակումը»:

Այդ բանաձեւը հաստատելու համար մեծ ջանքեր են թափել իտալիահայերը եւ Իտալիայի մօտ ՀՀ լիազօր դեսպան Գագիկ Բաղդասարեանը:

Իրանը անջատեց Ադրբեջան անցնող հոսանքը (Իրան օրաթերթ 31.10.00). - Ադրբեջանի պաշտօնեանների խոստումնազանց մօտեցման պատճառով՝ չմոծելով իրենց պարտքը Իրանը դադարեցրեց իր հոսանքի փոխադրութիւնը՝ Ադրբեջան: Ըստ որոշ տեւալների 1977 թականից սկսած հոսանքի ոլորտում Ադրբեջանի պարտքը կազմում է աւելի քան 42 միլիոն դոլար: Այս հոսանքը հիմնականում տրուում էր Նախիջեւանին:

Մինչեւ Եւրոխորհրդի անդամ դառնալը՝ Թուրքիան դեռ երկար ճանապարհ ունի (Համբարսեգի օրաթերթ 09.10.00). - Եւրոպային յանձնաժողովը մի յայտարարութեամբ, որ վերջերս է հրապարակել, յայտնել է, որ Թուրքիան դեռ անհրաժեշտ պայմանները Եւրոխորհրդին անդամակցելու համար չունի: Այդտեղ յատկապէս շեշտը դրուում է Թուրքիայում «մարդու Իրաւունք» ի ոտնահարման վրայ:

Իրան-Չինաստան յարաբերութիւնների զարգացում(Համբարսեգի օրաթերթ 08.10.00). - Իրանի եւ Չինաստանի խորհրդարանների բարեկամութեան խմբի ղեկավար եւ խորհրդարանի արտաքին քաղաքականութեան եւ ազգային անվտանգութեան յանձնաժողովի անդամ Ալլա Էլշին Բրուջերդին Չինաստանի դեսպանի հետ հանդիպելու ժամանակ

ասել է, որ Չինաստանը համարում է Իրանի «ժամր օրերի» քարեկամը: Նա նշել է, որ չնայած արտաքին ուժերի ճնշմանը երկու երկրները մեծ ցանկութիւն են դրսեւորում երկկողմանի յարաբերութիւնների զարգացման ուղղութեամբ:

Թուրք-երեւանի ընդհանուր ճակատ հայերի դէմ(Նոյեան Տապան 08.09.00). - Թուրքական «Ռադիկալ» թերթը մանրամասներ է հաղորդել ԱՄՆ հրեական յանձնախմբի հետ Թուրքիայի նախագահ Սեզերի հանդիպան ժամանակ հայկական կազմակերպութիւնների դէմ պայքարելու հարցի քննարկման մասին: Թերթի «Ընդհանուր ճակատ հայկական կազմակերպութիւնների դէմ» խորագրով յօդուածում նշուում է, որ Սեզերն իր ելոյթում նշել է, թէ «ԱՄՆ հրեական եւ թուրքական կազմակերպութիւնները մեծ ներդրում ունեն հակաթուրքական գործունեութիւն ծաւալած ինչ-ինչ կազմակերպութիւնների դիմագրաւելու գործում եւ յոյս է յայտնել, որ այս գործակցութիւնը կը շարունակվի»: Թուրքիայի նախագահին ամերիկարեանի հրեաներին կոչ է արել նաեւ նպաստել Թուրքիա-ԱՄՆ-Իսրայել ռազմավարական համագործակցութեան ամրապնդմանը:

Լիրանանցի կանայք հաւասարութեան իրաւունք են պահպանում-



(Կանչ շաբաթաթերթ 30.09.00).- Չերքազատել ընտանեկան, հասարակական, քաղաքական եւ տնտեսական կապաւնքներից ու կաշկանդումներից: Մի երագ, որի իրականացման համար երկար պայքար են մղել աշխարհի իզական սեռի ներկայացուցիչները: Այսպիսի կարգախօսների հետեւում կանգնած կանայք հաւաքեցին Բէյրութի թանգարանի

հրապարակ եւ պահանջեցին ազատագրել հնուց եկած ժառանգական կապաւնքներից:■

Խախտումներ... Շար. էջ 1-ից

Վերջում մենք ցաւում ենք, որ այդ բոլորից յետոյ գրութեան մէջ շեշտուել էին «Լոյս»ի ակնարկի կէտերը որպէս «անհիմն կասկածներ», «քամբասանք» եւ այլն: Արդե՞օք այդ եղածները բամբասանք եւ անհիմն կասկածներ են եղել: Ո՛չ, Դուք իրաւացի չէք, եկէք առաջին անգամը լինելով խոստովանեց մեր սխալները, ժողովուրդը պարգութիւն՝ ճշմարտութիւն է սիրում, եւ ատում է խմբակցական խաղերը: Համայանքը մինչ այժմ շատ է տուժել, եւ շատ բաներ կորցրել: Եկէք բոլորս միասին օգնենք նրան ընդհանուր քայքայումից հրաժարելու համար, եւ ոչ թէ «ուղղութիւն տանք» քանի որ ժողովուրդն է իր տէրը եւ իր գլխին կանգնած «տէրեր» ունենալու կարիքը չի գգում:

Էլմ³. ՌԱՃԱՇԻ

ՏԻՐՈՒՆԻ

Լոյս երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սզակիրներին:

- ◀ Յասմիկ Խաժակի (Պետրոսեան)
- ◀ Ռեբեկա Բարումեան
- ◀ Ժանետ Իսկանդարի
- ◀ Յուրիկ Ասլանեան (Եահնեան)
- ◀ Էլեաս Յոսէփեան
- ◀ Ամրան Մահմուդեան
- ◀ Մերի Սոհրաբեան (Շիրանեան)
- ◀ Յասմիկ Արրահամեան
- ◀ Լեւոն Խաչատրեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՈՒՄԸ ԲԽՈՒՄ Է ԹՈՒՐԲԻԱՅԻ ՇԱՀԵՐԻՑ

Յակոբ Չաքրեան
(«Ազգ» օրաթերթ)



Հայաստանն թե սփիւռքահայ մասնուր դեռ երկար կանդորադառնայ յունիսի 17-ին Փարիզում Մենատի «Մեղիչի» դահլիճում կայացած «Հայ-թուրքական երկխոսութիւն» համաժողովին, այդ ընթացքում հնչած ելոյթներին և յարակից հարցերին: Թերեւս այնքան էլ կարեւոր չէ, թէ ի՞նչ եզրակացութեան հանգեց հայ և թուրք մտաւորականների միջեւ կայացած այդ հրասպարակային առաջին համաժողովը, և կամ՝ ընդհանրապէս որեւէ եզրակացութեան հանգե՞ց, թէ՞ ոչ: Մանաւանդ որ հայկական «կողմի» երկու ներկայացուցիչների՝ Ժամ-Կրող Քերեբջանի և Ժիրայր Լիպարիտեանի ջանքերով, համաժողովի արտաին նախատեսած յայտարարութիւնն այդպէս էլ չստորագրեց մասնակիցների կողմից: Աւելի կարեւորն այս պարագայում այն դիտմանն էր, որ երեսն եկաւ հայկական «կողմում», երբ մեր բանախօսներից մէկը Ժ. Լիպարիտեանը, Հայոց ցեղասպանութեան հարցի առաջաշարժումը Հայաստանի իշխանութիւնների կողմից, գոնէ իր ձեռք մէջ, համարեց խոչընդոտ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների համար, մինչդեռ հէնց այդ հարցի շուրջ բացախօսութեան և անկեղծութեան անհրաժեշտութիւնը պիտի առաջացրած լինէր, թուով է, նման երկխօսութեան կարիքը: Անշուշտ, միասնական ճակատով հանդէս չեկաւ նաև թուրքական կողմը, որի ներկայացուցիչներից եթէ Ռազիբ Չարաբոլուն Հայոց ցեղասպանութեան մասին խօսում էր իբրև պատմական անուրանալի փաստի, սպա Օրալ Չալիշլարը և յատկապէս Մեթի Թունչալը բարբառում էին «փոխադարձ» խժոժութիւնների և, հետեւաբար, «փոխադարձ զոջման» անհրաժեշտութեան մասին:

Ծանօթանալով համաժողովում հնչած ելոյթների բնագրերին, մեր կարծիքով արդիականը և քաղաքականը մեր թերթի հեղինակներից Յակոբ Չաքրեանի զեկուցումն էր, որը որոշակի յայտատումներով հրատարակում ենք ստորև:

Քանի դեռ Հայաստանը ԽՍՀՄ-ի կազմում էր, խորհրդային բանակն ապահովում էր նրա անվտանգութիւնը: Սակայն, երբ անկախութիւն ձեռք բերեց, նրա առջեւ ծառայաւ իր անվտանգութիւնը սեփական ուժերով ապահովելու կենսական խնդիրը: Այդ առումով «բարիդրացիական յարաբերութիւնների կարգաւորումն անխտիր բոլոր հարեւանների՝ այդ թում Թուրքիայի հետ», սկզբնականօրէն ճիշտ որոշում էր: Թուով էր, թէ նորանկախ Հայաստանի ղեկավարութիւնը դրանով փորձում է քաղաքական եղանակով լուծել ազգային անվտանգութեան խնդիրը:

Մինչդեռ Թուրքիան էլ իր դիրքերն Անդրկովկասում ամրապնդելու, Ադրբեջանը որպէս ցատկահարթակ օգտագործելու միջոցով Միջին Ասիա ներթափանցելու խըն-

դիրն ունէր, որպէսզի հնարաւորութեան դէպքում ձեւաւորի թուրքալեզու հանրապետութիւնների տնտեսական, քաղաքական և մշակութային միութիւն: Ուստի Հայաստանն իր գոյութեամբ խոչընդոտ համարեց նրա երկարաժամկետ շահերին: Դրա վառ արտայայտութիւնը Մուլխամադ Դեմիրելի կողմից Հայաստանի բնութագրումն էր՝ «անիծեալ սեպ»:

Այս ամենը սակայն անտեսեց հայկական իշխանութիւնների կողմից: Նրանք, տեղի տալով ԱՄՆ-ի տրամադրութիւններին, ակամայ նպաստեցին տարածաշրջանում նրա լիազօր ներկայացուցիչ Թուրքիայի հետ միջպետական կապերի նշանակութեան անտեղի գերազանհատմանը Հայաստանում: Աւելին, կառավարող շրջանակների որոշ հայ գործիչներ սկսեցին հանդէս գալ «Հայաստանի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ վերանայելու և զլխաւորապէս դէպի Թուրքիա կողմնորոշելու» պահանջով:

Թէև այս միտումը զարգացում չստացաւ, բայց նախադրեալներ ստեղծեց, որպէսզի Թուրքիան էլ անտեսի Հայաստան-Ռուսաստան դաշինքի հաւանականութիւնը և իր հերթին թերազնահատի հայկական գործօնի հնարաւորութիւնները Անդրկովկասում: Ահա թէ ինչու թուրքական կառավարութիւնը, ճանաչելով հանդերձ Հայաստանի անկախութիւնը, մերժեց դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու նրա հետ, առաջադրելով նրանց 1915 թ. ցեղասպանութեան, Լեռնային Ղարաբաղի և հայկական սփիւռքի ու հակաթուրքական գործունէութեան վերաբերեալ նախապայմաններ:

Դիւանագիտական յարաբերութիւնների համար նախապայմանների առաջադրումն անհարիր է միջազգային պրակտիկային: Սակայն Թուրքիան ինչպէս այդ մասին վկայում է Սեդա Էրքիմը «Հուրիէթ» 1991 թ. նոյեմբերի 15-ի համարում, «Հայաստանի հետ բարիդրացիական յարաբերութիւններ հաստատելու կարիքը» չունէր: Ըստ ամենայնի, նա այդ նախապայմաններով փորձում էր կամակատար դարձնել Հայաստանին, որպէսզի նրա միջոցով իր կամքը թելադրի Ղարաբաղի հայութեանն ու հայկական սփիւռքին:

1992 թ. փետրուարին ղարաբաղեան ուժերը չեզօքացրին Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կարեւոր յենակետերից Խոջալուն: Դրան հետեւեցին Ըուշլիի ազատագրումն ու Լաչինի միջանցքի բացումը: Թուրքական կառավարութիւնը իսկոյն արձագանքելով դրան, համատարած հակահայկական հիստերիա հրահրեց: 1992 թ. մարտին նախագահ Թուրգութ Օզալն իր կառավարութիւնից պահանջեց հայերի «ռճրագործութիւնների» դէմ վճռական քայլերի դիմել: Այնուհետև նա սպառնաց «թուրքական ռազմական ուժերով կանգնեցնել հայերի առաջխաղացումը»: 1993-ին Քերբաջարի գրաւումից յետոյ Էրզալը, ակնարկելով 1915 թ. ցեղասպանութիւնը, յայտարարեց, թէ հայրերը «դասեր չեն քաղել Անատոլիայի փորձութիւնից և այնտեղ կրած փառժից»: Նա նոյնիսկ «Հայաստանի վրայ մէկ երկու ռումբ արձակելը» թոյ-

Հասարակական

լուտութեան ակնկալիքով դիմեց ԱՄՆ նախագահ Բիլ Կլինթոնին:

Օգալի ռազմաշունչ յայտարարութիւններին զուգընթաց Անկարայի պաշտօնական շրջանակները քննարկում էին Հայաստանի նկատմամբ «Կիպրոսեան տարբերակի» կիրառումը: Այդ ընթացքում սահմանին տեղակայւած թուրքական զօրքերը, որոնք բերել էին բարձր մարտական պատրաստածութեան վիճակի: Հայաստանը կանգնեց Թուրքիայի ռազմական ներխուժման լուրջ վտանգի առջեւ: Միաժամանակ երկրում աշխուժացան թուրք ազգայնամոլները: «Ազերի եղբայրներին» օգնութեան ձեռք մեկնելու» կարգախօսով «Գորշ գայլերը» զենքի կոչեցին «զօգն թուրքին»: «Գերչեք» շարքաթերթի տեսալուսանկարով, մինչեւ 1992 թ. յունիսը, Նախիջեւանի եւ Աջդրեջանի տարածքում տեղակայւած էին շուրջ 3 հազար թուրք կամավարականներ: Ինչ վերաբերում է թուրքական կառավարութեանը, ապա նա դեղորայքի եւ պարենամթերքի քողի տակ հասցրել էր աղբրեջանցիներին տրամադրել զենք եւ զինամթերք, այդ թում 5 հազար «Մտինգեր» հրթիռներ, ինչպէս նաեւ հրթիռային կայանք, ականներ եւ ակամանետներ: 1993-ին Թուրքիան պաշտօնապէս Ադրբեջանին 30 մլն դոլարի վարկ յատկացրեց զենք գնելու համար: Փաստօրէն նա դարձաւ դարաբաղեան հակամարտութեան անմիջական մասնակիցը՝ բերելով նաեւ իր անուղղակի մասնակցութիւնը Լեռնային Ղարաբաղում ծաւալող ռազմական գործողութիւններին:

Հաշի առնելով թուրքական ազդեցիկի հնարաւոր հետեւանքները ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ Անդրկովկասի համար, Թուրքիայի վրայ ճնշում գործադրեց Ռուսաստանը, Ռուսական զինւած ուժերի գլխաւոր շտաբի պետ մարշալ Շապոշնիկովը լրջօրէն զգուշացրեց Թուրքիային, որից յետոյ վերջինս այլեւս չհամարձակեց Հայաստան ներխուժել: Ընդհին դրա, Հայաստանը ոչ միայն խուսափեց մօտալուտ ազդեցիկից, այլեւ Լեռնային Ղարաբաղի օգնութեան ձեռք մեկնելու հնարաւորութիւն ստացաւ: Ղարաբաղեան ուժերը տպաւորիչ յաղթանակների հասան աղբրեջանցիների նկատմամբ: Այսպիսով, ի չիք դարձան հակամարտութեան գօտում ռազմական հաւասարակշռութիւնը Թուրքիայի աջակցութեամբ փոխելու Ադրբեջանի յոյսերը: Աւելին, 1993-ին ԼՂՀ պաշտպանութեան բանակն Ադրբեջանին պատճառելով տարածքային կորուստներ, իր վերահսկողութեան տակ վերցրեց մինչեւ Հօրնդիզ ընկած տարածքը: Չանգեղաւորի գօտին անրապնդեց: Դրանով էլ փաստօրէն տապալեց Գորի տիրահռչակ ծրագիրը:

Այս ամենը ստիպեց Ադրբեջանին Մոսկւայում Ռուսաստանի միջնորդութեամբ ստորագրել 1994 թ. մայիսի 12-ի հրադադարի պայմանագիրը: Յատկանշական է, որ եթէ ԼՂՀ պաշտպանութեան բանակի յաղթական գործողութիւնները հանգեցրին Ադրբեջանում Թուրքիայի դիրքերի թուլացմանը, ապա հրադադարի պայմանագիրը նպաստեց, որ դարաբաղեան հիմնահարցի նախաձեռնութիւնն անցնի Ռուսաստանին:

Ղարաբաղեան ճակատում Թուրքիայի քաղաքական ձախողումն անյայտ էր: Ինչ վերաբերում է հայաստանեան ճակատին, ապա Թուրքիան իր ազդեցիկ կեցածքով նպաստեց դարաբաղեան շարժման սկզբնական փուլում (1988-91 թթ.) Խորհրդային Միութեան ղեկավարների կողմից Ադրբեջանին ցուցադրող քաղաքական, միջակայք:

նաեւ ռազմական աջակցութեան պատճառով հայ հասարակութեան մէջ առաջացած հակառուսական տրամադրութիւնների վերացմանը: Թուրքական սպառնալիքը հայ ժողովրդի ենթագիտակցութեան մէջ վերստին անրապնդեց Թուրքիայի հարեւանութեամբ առանց Ռուսաստանի հետ սերտ դաշինքի գոյատեւելու անհնարինութեան գաղափարը: Թուրքիայի նկատմամբ անվտանգութիւնը Հայաստանում համատարած բնոյթ ստացաւ: Հայաստանին Թուրքիայով միջնորդաւորւած արեւմտեան կողմնորոշում պարտադրելու հաւանականութիւնը հաւասարեց զրոյի:

Քանի որ Թուրքիայի ներխուժման կասեցումը դեռ թուրքական վտանգի չեզոքացում չէր, եւ վերջինս, միանալով Ադրբեջանին, շրջափակման էր ենթարկել Հայաստանը, ուստի ազգային անվտանգութեան հարցը հայկական իշխանութիւններից պահանջեց այլ լուծում, քան «բարիդրացիական յարաբերութիւնների հաստատումն» էր բոլոր հարեւանների հետ: Լուծման լուրջ միջոցը, Ռուսաստանի հետ Հայաստանի համագործակցութիւնն էր ռազմական ու ռազմավարական բնագաւառներում:

Ընդհին Ռուսաստանի հետ զինակցութեան, Հայաստանի ազգային անվտանգութիւնը դուրեց յուսալի հիմքերի վրայ: Ռուսաստանն իր հերթին, յանձնի Հայաստանի, ռազմաքաղաքական յեմարան ձեռք բերեց Անդրկովկասում: Չախողեցին նրան այդ տարածքից դուրս մղելու ԱՄՆ-ի ծրագրերը, ինչպէս նաեւ Թուրքիայի այդ ծրագրերից բխող հաշարկները: Այլ կերպ ասած, Հայաստանը դարձաւ՝ Անդրկովկասում Ռուսաստանի ներկայութեան ազդեցիկ գործօն: Ինչ վերաբերում է հայ-ռուսական համագործակցութեանը, ապա դա Հայաստանին տալով թուրքական ճնշմանը դիմազարտելու հնարաւորութիւնը, միաժամանակ նրան գործօն դարձրեց նաեւ Թուրքիայի համար: Այն տարբերութեամբ, որ եթէ Ռուսաստանի պարագայում հայկական գործօնի Ֆունկցիան կառուցողական էր, ապա Թուրքիայի դէպքում ստացաւ կանխարգելիչ բնոյթ: Սեւ թէ ինչու Թուրքիան, համագործակցելով հանդերձ ռազմական եւ ռազմավարական բնագաւառներում ինչպէս Ադրբեջանի, այնպէս էլ Վրաստանի հետ, չի կարողանում Անդրկովկասում նւաճել ազդեցիկ դիրքեր՝ առաւել եւս այդ տարածքը դարձնել իր ազդեցութեան ոլորտը:

Վստահաբար կարելի է ասել, որ Թուրքիան ձախող-եց նաեւ հայաստանեան ճակատում: Չնայած նրա ընդգրկւած հակահայկական դիրքորոշմանը, ներխուժման սպառնալիքներն ու ճնշումներին, Հայաստանը կարողացաւ պահպանել իր ազգային անվտանգութիւնը եւ օգնութեան ձեռք մեկնեց Ղարաբաղի հայութեանը նրա ազգային ազատագրական պայքարում ընդդէմ Ադրբեջանի: Կազմաւորեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, եւ նա ձեռք բերեց փաստացի անկախ կարգավիճակ: Աւելին, Հայաստանը շարունակում է յաջողութեամբ պաշտպանել ԼՂՀ-ի, իսկ 1915թ. Հայոց ցեղասպանութեան հարցը բարձրացրել է պետական քաղաքականութեան մակարդակի: Ամրապնդում են նրա կապերը տարածաշրջանի երկրների Միքիայի, Լիբանանի, յատկապէս Իրանի, ինչու չէ, նաեւ հեռաւոր Չինաստանի հետ:

Շար էջ 25-ում



Ստացված գրություն

«Լոյս» երկշաբաթաթերթի յարգարժան խմբագրություն.

Այսու ներփակ Ձեզ եմ ուղարկում 11-րդ Պատգամաւորական ժողովի 23 սեպտեմբերի 2000 թ. նիստում ընթերցւած գրութիւնս. միշտ հաւատացած լինելով, որ ազգային դուռնիների գործելակերպի կապակցութեամբ անկեղծօրէն եւ անկողմնակալ արտայայտւած թեր ու դէմ կարծիքները մամուլում տպագրելով եւ այն՝ ժողովրդի սեփականութիւնը դարձնելով՝ կամայ թէ ակամայ նրան մասնակից ենք դարձնում մեր ազգային կեանքում առկայ դժարութիւններին: Ուստի խնդրում եմ սոյն գրութիւնը տպագրել Ձեր թերթում, որպէսզի ժողովորդը հաւատայ, որ իրեն յուզող ու նտահող խնդիրները եւս արծարծւում են Պատգամաւորական ժողովներում:

Որոշ նկատառումներով յարմար նկատեցի այն տպագրութեան յանձնել 12-րդ ՊԺ ընտրութիւններից յետոյ:

Յարգանք՝ Կիտուշ Արզուեան
21.10.2000

Գերաշնորհ Սրբազան Հայր
11-րդ ՊԺ յարգարժան Դիւան եւ յարգելի պատգամաւորներ.

Եւ ահա՝ տասնիինգ տարի անցաւ 11-րդ ՊԺ կեանքից, ու եւ էլ որպէս «Ժողովրդի պատգամաւոր» 15 տարի մասնակցեցի այդ ժողովներին, սակայն շատ փոքր էր այն քայլերը որոնք պիտի նպաստէին ժողովրդի բարօրութեանը:

Եւ 15 տարի, եւ այսօր ժողովրդի տարբեր խաւերից (արհեստաւոր, ուսուցիչ, միութենական, պաշտօնեայ, տան տիկին եւ այլն) միայն լսեցի,- Ինչ էք արել մեզ համար, որ խօսում էք արտագաղթի մասին, որ խօսում էք դպրոցների համար, որ խօսում էք Հայաստանի երկրաշարժին յատկացած դրամների մասին, որ խօսում էք ձեզ տրամադրւած կալւածներից, ո՞ր դպրոցի շէնք էք շինում թաղում: Իսկ աշակերտները գնում են պարսկական դպրոց, ծնողները լքում են իրենց ծննդավայրը: Միայն թոշակներն էք թանկացնում եւ գրքերի գրները բարձրացնում: Արդեօ՞ք ձեր գրպանները հարբստացնելու, թէ՞ երեխաների մտքերը հայեցի դաստիարակութեամբ հարստացնելու համար է այս բոլորը: Ինչո՞ւ ճանապարհ չէք գտնում մեր լաւ ուսուցիչների շտաբները աւելացնելու կամ մասնագէտ ուսուցիչներ հրաւիրելու համար:

Եւ նորից լսում եմ ժողովրդից,- Քանի՞ տարի կը տեւի Ս. Սարգիս Եկեղեցու գմբէթի նորոգումը: Ձեր տրամադրութեան տակ եղած շէնքերից արդեօ՞ք մի հատը տրամադրել էք մի կարգիատր ընդամենի, թէ՞ ձեր պաշտօնեաները իրենց սեփական շէնքերը քրահով են տալիս ու ձրիաբար օգտագործում ձեր կալւածներից: Խօսում էք մշակութի մասին, սակայն ինքներդ սրահի առաջին շարքի աթոռների վրայ նստած երգչախմբերի ելոյթի ժամանակ, մորայով էք խօսում:

15 տարի եւ ինքս ինձ ժողովուրդ զգացի եւ ոչ թէ նրա ցաւերը բուժող մի ներկայացուցիչ:

Եւ այսօր ինքս ինձ հարց եմ տալիս,- արդեօ՞ք մտածել եւ վերլուծել ենք այն իրականութիւնը, թէ ինչո՞ւ են մեր սրահները դատարկ, երբ ուզում ենք բացատրութիւն տալ հայ համայնքին՝ մեր ժողովրդին, 12-րդ Պատգամաւորական ժողովի կապակցութեամբ:

Իսկ այսօր, երբ արդէն մէկ ամիս է մնացել 11-րդ ՊԺ աւարտին, թոյլ տուք ասելու, որ բաւական է 15 տարի խրտիչակի դեր խաղացի, այս՝ վերջին մէկ ամիսը հրաժարում եմ այդ դերից եւ չեմ մասնակցելու ժողովներին:

Վերջում առաջարկս 12-րդ Պ.Ժ.ժողովին՝ աւելի լայնախոհ լինել եւ ժողովրդի շահերը բարձր դասել իրաքանչիւր գրաւած աթոռից:

Յարգանք՝ Կիտուշ Արզուեան
11-րդ Պ Ժ անդամ

21.09.2000

Հաղորդագրութիւն Թիւ 03

Ատրպատականի Հայոց Թեմի 17-րդ Պատգամաւորական ժողովի Ընտրութիւնները տեղի են ունենալու՝

Թուական Ուրբաթ, 15 դեկտ. 2000 թ.
Վայր Ազգ. Առաջնորդարանի «Հ. Ռսկանեան» սրահում
Ժամ Առաւօտեան 8.30- ից մինչեւ ճաշից յետոյ 6-ը.

Թեկնածուները, նոյնմբեր 06-ից մինչեւ 13-ը, ամէն օր դիմեն Ազգայի Առաջնորդարանում Ընտրական Յանձնախմբին ճաշից յետոյ ժամը 5-ից 6-ը՝ ստանալու հարցաթերթիկներ եւ յաւելալ բացատրութիւններ, լուսաբանութիւններ: Թեկնածուները նոյն հարցաթերթիկները ամբողջացնելուց յետոյ մինչեւ դեկտ.-ի 01-ը ներկայացնեն նոյն ընտրական յանձնախմբին, Առաջնորդարանում՝ վերը յիշուած ժամերում:
Ընտրական Յանձնախումբ

Ընթերցողների ուշադրութեան ենք յանձնում՝

«ԼՈՅՍ» երկշաբաթաթերթի 15-րդ համարի ժամանցի բաժնի ծաղրանկարները պատաստել էր Լահիդ Աբբարին :

§ ÆÛ Ī áóéùÁ ÇÛ Ñ³ ĩ»ÝÇùÝ ¿ »Õ»É.. Ð³ ĩ»ÝÇùÇó
ı »ñ áãÇÝă äĪ³ Ū³ ßĒ³ ñÑáóÛ | :

Հանդիպում Վաստակաւոր
արւեստագէտի հետ

Վաչիկ Վարդանեան

Չկայ իրանահայ թատերասէր, որ չճանաչի հանրածանօթ բեմադրիչ, դերասան եւ մտատորական Հայկազ Ստեփանեանին: Թեւորանահայ արւեստասէր համայնքին քաջ ծանօթ է Արամաշուտ Պապայեանի գրիչին պատկանող «Մեծ Հարսանիք» թատերգութիւնը, որը երկու տարբեր ժամանակներում բեմադրուեց Թեւրաւում՝ «Հայկական Հարսանիք» անուան տակ: Այն երկրորդ անգամ բեմադրուեց 1984 թականին Թեւրաւում, որի բեմադրիչն էր Հայկազ Ստեփանեանը: Նա այդ բեմադրութեան մէջ ներկայանում էր ոչ միայն որպէս բեմադրիչ, այլ նաեւ «Վարպետ Մարգարի» առանցքային կերպարը ներկայացնում էր ինքը՝ Հայկազ Ստեփանեանը:



Մի հրաշալի բեմադրութիւն եւ նոյնքան վարպետ դերակատարումներով: Կատարեալ կողեզիա էր համախմբել Հ. Ստեփանեանի շուրջ: Իրօք, ամէն ինչ կատարեալ եւ նախանձելի էր: Եւ այս բոլորը շնորհիւ՝ մեծ արւեստագէտ Հայկազ Ստեփանեանի: Ստեփանեանը ստեղծագործ արւեստագէտ էր, իր իւրայատուկ արւեստը ունէր եւ երբէք չէր օրինակում մի այլ արւեստագէտի: Նա խուսափում էր այն բոլորից, որ արդարօրէն արհեստական է համարում: Նրա ամէն մի շարժ ու ձեւում նոր բան կը տեսնէիր, եւ դա էր Ստեփանեանի արւեստի իւրայատկութիւնը:

Հայկազ Ստեփանեանը մի թոյլ կողմ ունէր եւ դա այն էր, որ նա երբէք իրեն յանձնարարած կերպարի գրաւած խօսքերը անգիր չէր անում: Այդ հանգամանքը բնականաբար սովորական դերակատարին կը թողնէր անելանելի վիճակում: Սակայն մեծ արւեստագէտը յենելով իր հարուստ բառապաշարին եւ առաւել իր եզակի տաղանդին միշտ յաղթում էր բեմում: Նման դէպքերում այդ արարքը յաճախ խաղընկերօջը շփոթութեան է մատնում, քայց նա այդ անում էր այնքան վարպետօրէն եւ յաճելի, որ նրա հաղորդակից դերա-

կատարը այդ ընդունում եւ ընկալում էր մեծ հաճոյքով: Նոյնիսկ յուշարարաներից մէկը, երբ բողոքում էր նրա այդ արարքի համար, նրա խօսքերում որեւէ վրդովմունք չկար, այդ բողոքը կարծես արտայայտում էր իր հիացմունքը բացատրելու համար:

Մի օր ինքը անձամբ դիմում է մի հանդիսատեսի որ նրան քանի գիշեր տեսել էր սրահում այդ նոյն ներկայացումը դիտելիս եւ հարցնում է. «Ին՞չն է պատճառ եղել, որ Դուք քանի գիշեր շարունակաբար զայիս էք այս նոյն ներկայացումը տեսնելու», եւ նա պատասխանում է. « Ախր գիտէք ին՞չ, Դուք ամէն գիշեր այդ նոյն բեմից մի նոր խօսք էք ասում»:

«Դեյիբանէ Թանգեստան» (Թանգեստանի քաջերը) սերիայի նկարահանման ընթացքում Ստեփանեանը մի անգլիացու բացասական կերպար էր ներկայացնում: Մի դուրսի նկարահանման ընթացքում նրա համար գրաւած նախադասութեան փոխարէն, յանկարծ նրա լեզուից լսում է հետեւեալը՝ «Աքբար հալէ ասբէտ չէթոր է» (Աքբար ձիուդ առողջութիւնը ո՞նց է): Կիսօռնեծիտորը լսելով այդ նախադասութիւնը, վազելով մօտեցնում եւ հիացած ասում է. - « Դու իրօք հրաշք մարդ ես , որտեղի՞ց գտար այդ խորհրդաւոր եւ յարմար նախադասութիւնը»:

Դարձեալ յիշում եմ, բեմադրում էր «Հայկական Հարսանիքը»: Ժողովուրդը բակում՝ վրանի տակ անհամբեր սպասում էր ներկայացմանը: Իսկ այդ գիշեր անասելի անձրեւ էր թափում երկնքից, աւելի ճիշտ շառափ էր: Վրանը չէր դիմանում, եւ ի վերջոյ անձրեւից ստացած ջուրը թրջեց ժողովուրդին:

Ժողովրդին խնդրեցին թողնել ներկայացման վայրը եւ ներկայանալ մի այլ օր, բայց ժողովուրդը մեծ ցանկութեամբ պահանջեց շարունակել բեմադրութիւնը՝ հանդուրժելով այդ ծանր կացութիւնը:

Իրօք յիշարժան պահ էր: Տիկին «Նազիկ»ի (Վարպետ Մարգարի կինը) դերակատարը վրդոված այն քանից, որ իր միջոցէկ որդին ընտրել է մի այրի կնոջ՝ որպէս ամուսին, կրկնեց իր նախադասութիւնը. «Ես ի՞նչ անեմ, կը գնամ ինձ կնտտն Վանա ծովը»: Իսկ Ստեփանեանը, որ ներկայանում էր Նազիկի ամուսնու՝ Վարպետ Մարգարի դերում՝ նկատելով բեմից ոչ այնքան հեռու հաւաքած ջուրը, մոռացութեան տալով գրաւած նախադասութիւնը, ասաց. «Այ կնիկ ինչո՞ւ Վանա ծով, ահա քեզ «ծով», ուզո՞ւմ ես խեղդել, խնդրեմ»:

Հայկազ Ստեփանեանը, որ այժմ բնակւում է ԱՄՆ, այս օրերին Իրան այցելեց եւ մենք առիթը յարգելով, նրան հրաւիրեցինք «Լոյս»-ի խմբագրութիւն մի մտերմիկ հանդիպում ունենալու նպատակով:

Ըստ սովորութեան պատրաստել էինք մի քանի հարց, բայց ճանաչելով նրա բնատրութիւնը գիտէինք, որ նա չի հետելու մեր ընթացքին: Այնուամենայնիւ մի



կերպ ինձ յաջողում է տալ առաջին հարցը. «Վարպետ չնայած որ Չեզ ճանաչում է մեր համայնքն, այդուհանդերձ կը խնդրենք...»: Հարցս չվերջացած պատասխանում է. «Ես մի խեղճ ու կրակ չարմահայցի եմ: Իրանում գտնե մի 30 տարի թամազա եմ եղել: Սա է եղել իմ պաշտօնը: Երգիծանքի միջոցով կամեցել եմ իմ բոլոր ապրումներն ու համոզմունքները փոխանցել ժողովրդին: Իմ կուռքը իմ հայրենիքն է եղել, միշտ աշխատել եմ փոխանցել այդ հասկացողությունը եւ իմ անձի համոզմունքն է, որ Հայրենիքից վեր ոչինչ չկայ աշխարհում»:

Հայրենիքի մասին խօսելու ժամանակ, նրա ներքին ապրումներն աննկարագրելի էին:

... Երբ մտնում ես հայ ժողովրդի խորհրդարանը եւ սպանում ես մի մարդու, որին արդարօրէն կարելի է հայ ժողովրդի «Հայրն» անուանել, մի մարդու, որ քեզ համար մետրապոլիտեն է կառուցել, մարզահամալիր է կառուցել եւ շէնացրել է մեր հայրենիքը, մեր հինաւուրց մայրաքաղաքը՝ քեզ ի՞նչ սյուտի անուանել: Այդ բոլոր անմարդկային եւ ազգադաւ արարքները հերիք չէր, դեռ սկսում ես արածովդ պարծենալ: Ամերիկայում հանդէս ես սարքում, պսակ ես դնում ճակատիդ, որ ի՞նչ-որ Վազգէն Սպարապետին ես սպանել: Անօք քեզ...

Լսիր, ասում է. « Հայրենիքը կուսակցութիւն չի ճանաչում, նրանք չեն մեր ժողովրդի ճակատագիր որոշողը: Եթէ կարող ես օգնիր: Մենք կուսակցութիւնների եւ դրսից եկած թելադրանքների կարիք չունենք »:

Ասում եմ, - Վարպետ, ես անձամբ ծանօթ եմ Չեր ընտանեկան կեանքին, նաեւ Չեր տիկինոջ՝ տիկ. Լուսիկի հոգեբանութեանը: Ցանկալի է Չեր լեզվից լսել տիկ. Լուսիկի մասին: Արդեօ՞ք որեւէ խոչընդոտ ունեցել էք Չեր կեանքում: Պատասխանում է. «Տիկ. Լուսիկը հրաշալի կին է: Նա միշտ կրատրական դիրքում է եղել մեր կենցաղային հարցում: Նա ինձ համար եղել է ոչ միայն ամուսին՝ այլ կեանքի բացառիկ ընկեր: Ես մի կոպիտ չարմահայցի եմ: չարմահայցի լինելը ինքնին փաստ է: Այնպէս որ նա իրօք հրաշալի էակ է, մանուսանը, եթէ ինձ նման մարդու վրայ այսպիսի մեծ տպավորութիւն է բողել »:

80 տարին բոլորած արեստագէտին հրաժեշտ ենք տալիս, նորից հանդիպելու յոյսով: ■

«Օտարագիւների գերեզմանները Սպահանում»

Լ.Գ. Մինասեան



Մօտ օրերին, Սպահանում լույս տեսաւ Հուշանգ Մազախէրու պարսկերէն լեզուով գրած «Օտարագիւների գերեզմանները Սպահանում» խորագրով գիրքը, ուր բերել է Սպահան քաղաքում թաղւած բոլոր օտարերկրացի ննջեցեալների անուանցանկը, անգլերէն եւ պարսկերէն լեզուներով:

Գիրքը բաղկացած է 323 էջերից, միջակ ծաւալով, ուր կան նաեւ որոշ թով գունատր եւ սեւ ու սպիտակ տապանաքարերի եւ անձերի նկարներ: Գրքի շապիկի Ա. էջի վրայ դրած է յայտնի բանասէր իրանագետ Արթուր Ափեւն Փոսիի եւ նրա կնոջ դամբարանի նկարը, իսկ շապիկի վերջին էջի վրայ՝ մի փոքր խմբանկար եւ չորս հոգու՝ Նարդ Այոհնեանի, Փոսիի, ՔրիստոՖելի եւ Հոյցերի առանձին փոքր նկարները:

Գրքի հեղինակը օգտւելով այդ առթիւ եղած գրականութիւնից եւ անձամբ եւս պրպտումներ կատարելով Նոր Ջուղայի հայոց բողոքականաց եւ այլ գերեզմանատներից եւ Վանքի ու եկեղեցիների շրջափակերում եղած տապանաքարերից, գրքում բերել է Սպահանում եղած բոլորի ցանկը, ինչպէս եւ որոշ ննջեցեալների կենսագրութիւնը:

Իրանց միջից, որպէս յայտնի դէմքերի պէտք է յիշել՝ Ռուդոլֆ Շտեյնլորին (Չիցերացի ժամագործը, որ սպանել է), Ռաֆայէլ Դուման, Ժակոբ Ռուսը, Ալեքսանդր Դեքալեր, Էրնեստ Քրիստոֆել (կոյրերի ուսուցիչ), Արթուր Փոսի, Էրնեստ Հոյցեր, Արմենուհի եւ Նարդ Այոհնեաններ եւ այլն:

Գերեզմանատներում թաղւած ննջեցեալները պատկանում են անգլիացիներին, լեհացիներին, գերմանացիներին, գիցերացիներին, Ֆրանսիացիներին, հոլանդացիներին, լիբանանցիներին, ռուսներին, աստրալիացիներին, ամերիկացիներին, ինչպէս եւ յոյներին, ասորիներին, վրացիներին եւ այլոց:

Այդ գերեզմանատներն են՝ Ն.Ձ. հայոց գերեզմանատունը, Մր. Ամենափրկիչ Վանքի շրջափակում եղած տապանաքարերը, բողոքականաց գերեզմանատունն եւ մի քանի այլ վայրերում եղած շիրիմները:

Գիրքն իր ամբողջութեան մէջ, անելի մեծ հետաքրքրութիւն կարող է ներկայացնել այն անձանց համար, որոնք ազգակիցներ ունեն թաղւած Սպահանում, որոնցից ոմանք երբեմն անձամբ գալիս ու հետաքրքրում են իրենց ազգակիցներով եւ այցելում դրանց գերեզմաններին:


Ինչպէս յիշեց, եղած ննջեցեալների ընդհանուր ցանկից բացի, որ տպագրւած է նաեւ «Նոր Ջուղայի գերեզմանատունը» գրքի մէջ, այդտեղ բերել է նաեւ ոմանց կենսագրութիւնը, որոնց միջից առանձնապէս մեծ հետաքրքրութիւն ունի կոյրերի ուսուցիչ եւ պաշտպան՝ Էրնեստ Քրիստոֆելին կենսագրութիւնը, որի մասին մենք անդրադարձել ենք եւ նրա աշակերտ աչագուրկ Վաղարշակ Միրզայանեանի տարելիցի առթիւ գրւած յօդածում («Ալիք» 23 յուլիս 1948թ.) որի դիակը իր ցանկութեամբ եւ կտակի համաձայն Շիրազից փոխադրեց եւ թաղեց իր ուսուցչի մօտ:

Գնահատանքի եւ քաջալերանքի արժանի է պրն. Հուշանգ Մազախէրու տարած աշխատանքը, անցեալն ուսումնասիրելու եւ լոյս աշխարհ հանելու խնդրում: ■

Նոր Ջուղա
10 հոկտ. 2000 թ.

«Նոր էջ» եւ Նոր էջականներ

Գ. Խանենց



Հազար իննը հարիւր երեսնական թականներին, Թեհրանում հրատարակուի էին երկու շաբաթաթերթեր: Մէկը «Վերածնունդն» էր՝ խմբագրութեամբ Հայկ Գարագաշի, որը խօսնակն էր իրանահայութեան Զախ Հոսանքի եւ անկուսակցական ազգայինների, իսկ միւրը՝ Դաշնակցութեան «Ալիք» շաբաթաթերթը, որի խմբագիրն էր Յովսէփ Թաղէսեանը: Անշուշտ այն ժամանակի գրողներն էլ բաժանուած էին երկու ճակատի:

1933 թականից սկսած «Վերածնունդը» «Նոր էջ» վերնագրի տակ երիտասարդ բանաստեղծների համար գրական մի էջ յատկացրեց:

Այսպիսով «Վերածնունդի» գրական էջի մասնակցողները, իրար շուրջ հաւաքելով, հիմքը դրին «Նոր էջ» գրական խմբակցութեան:

Նրանք բոլորն էլ հաւատում էին հաւաքական գործի յաջողութեանը: «Նոր էջ»-ի հիմնադիր անդամներն էին հետեւեալ տարեց եւ երիտասարդ գրողները:

Հրանդ Ֆալեան, Դեւ, Ա. Ասլըն (Ասլան), Գեղամ Մըկըրտչեան, Արա Տէր Յովհաննիսեան, Գալուստ Խանենց եւ Արշալիր Սկրտչեան:

1935-ին, այս գրական խմբակը հրատարակեց «Նոր էջ» թիւ մէկ (1) պարբերագիրքը, ուր իր մանիֆեստ-նախաբանում, առաջին անգամ լինելով, շեշտեց իրանահայ գրականութիւն ունենալու անհրաժեշտութիւնը:

- «Ունենալ սեփական մի հզօր կուլտուրա, որ ամենից առաջ հպարտութիւն ներշնչի մեզ,- իսկ այդ հպարտութիւնը ինքնին ամենամեծ խթանն է մեր ինքնապահպանման,- եւ ապա, նրա շնորհիւ, պատկառանք դէպի մեր գոյութեան իրատունքը՝ օտարների կողմից, ահա թէ ինչը պիտի ապացուցի մեր նպատակը:

Գրականութիւնը այդ նպատակին ծառայող գործօններից մէկն է:

Այդ նպատակը Գեիինն է եւ այն մի խումբ երիտասարդների, որոնք այսօր իրենց այս առաջին փորձով ներկայանում են մեր հասարակութեանը»:

«Նոր էջ»-ի մանիֆեստը գրել է այն օրերին, երբ Ռեզա Ըսահը, թրքամէտ քաղաքացիութիւն էր վարում հայ փոքրամասնութեան հանդէպ: Նա 1936 -ին Թուրքիայի Արաբուրքին հանդիպելուց յետոյ իր դաժան հրամանը արձակեց հայկական դպրոցները փակելու համար: Նման դժոխական պայմաններում «Նոր էջ»-ական գրողները հիմք դրին Իրանահայ Գրականութեան:

«Նոր էջ»-ի անդամները քաջածանօթ լինելով միջազգային արդի գրականութեան, տիրապետելով մի քանի օտար լեզուների, ստեղծում էին նոր երանգներով, նոր ըմբռնումներով, յառաջադիմական ձգտումներով գեղեցիկ գրականութիւն:

«Նոր էջ»-ի հրատարակած գրքերը, ոչ միայն իրանահայ, այլ հայ գրականութեան անդաստանում, հրապարակ հանեցին՝ Նորարական եւ գերիրապաշտ բանաստեղծութեան հասկանալիութիւնն ու ըմբռնումը: «Նոր էջ»-ը նաեւ կարող դեր ունեցաւ օտար գրականութիւնը, յատկապէս *Նորարարականը*, հայ ըմբերողներին ծանօթացնելու գործում:

«Նոր էջ»-ի հիմնադիր անդամներին յաջորդ տարիներին, միանում են՝ Չորայր Միրզայեանը, Ռ. Բէնը եւ Արմէն Գեւը:

«Նոր էջ»-ականները մինչեւ 1943 թականը կարողանում են հրատարակել հինգ պարբերագիրք: Մակայն երբ Իրանը գրաւեց դաշնակիցների կողմից, ստիպողաբար մի քանի տարի «Նոր էջ»-ի գործունէութիւնը խափանեց:

Դաշնակիցների երկրից հեռանալուց յետոյ, Թեհրանն էլ դանդաղօրէն իր նորմալ կեանքին վերադարձաւ: Բազմաթիւ նոր մշակութային միութիւններ հիմնեցին եւ «Նոր էջ»-ի անդամներն էլ վերսկսեցին իրենց հանդիպումները եւ գրական գործունէութիւնը:

Այդ հանդիպումների արդիւնքը այն եղաւ, որ 1957- ի ընթացքում «Նոր էջ»-ական բանաստեղծներից չորսը՝ Գ. Խանենց, Արշալիր Սկրտչիչ, Աշոտ Ասլան եւ Ջ. Միրզայեան առանձին հատորներով հրատարակեցին, որպէս մատենաշար «Նոր էջ» պարբերագրի:

Իրանահայ իրականութեան մէջ աննախընթաց Երեւոյթ էր մէկ տարւայ ընթացքում չորս բանաստեղծական հատորների հրատարակութիւնը արագ յաջողականութեամբ, որպէս «Նոր էջ»-ի գրական շարժման արտայայտութիւն: Այս չորս գրքերը, Իրանից դուրս, գրական շրջանակներում արժանի արձագանք գտան, սակայն իրանահայ մամուլը լուռ մնաց:

Ըստական դաժան վարչակարգը նոր ամսագիր, կամ թերթ հրատարակելու արտօնութիւն հայերին չէր տալիս, ուստի «Նոր էջ»-երը որպէս գիրք- գրականութիւն էին լոյս տեսնում եւ ամիսներ պահում էին գրաքննիչների սեղանների վրայ:

«Նոր էջ» գրքերի բովանդակութիւնը երեք գլխատր մասերից էին բաղկացած: Առաջին մասը «Նոր էջականը», ուր երեւան էին գալիս «Նոր էջ»-ականների ինքնուրոյն ստեղծագործութիւնները: Երկրորդ մաս՝ «Պարսիկ Գրողներ», ուր ներկայացւում էին պարսիկ յառաջադէմ արդի գրողները: Երրորդ մասում տեղ էին գրաւում միջազգային համբաւի հասած արդի գրողները:

ԱՄՆ մի պարբերագիրք խմբագրում էր անդամներից մէկի կողմից: Այսպէս հերթաբար խմբագրութեան պարտականութիւն են կատարել Չորայր Միրզայեանը, Արշալիր Սկրտչիչը, Գալուստ Խանենցը, Ռ. Բէնը եւ Արմէն Գեւը (Վարդգէս Ֆրանգեան):

«Նոր էջ» գրական խմբակցութեան շաբաթական հանդիպումների ընթացքին, որ 1960 թականից սկսած Հայ Ակումբում էր տեղի ունենում, մի եզակի եւ անօրինակ գրական մթնոլորտ էր ստեղծում: Վերլուծում, քննադատում էին խմբակցութեան եւ կամ ուրիշ գրողների գործերը եւ վիճաբանութեան միջոցով դառնում զանգուստ գրական հարցեր:

Այդ հանդիպումներին յաճախ ներկայ էին գտնում պարսիկ անանի Նորարար Գրողներ, ինչպէս՝ Շամլուր Վերփուր, Բարահանի, Ֆորուզ Ֆարոխզադ եւ ուրիշներ:

Մշակոյթ

Այդ հասարկութեան հրաւիրում էին նաեւ Թեհրան ժամանող սփիւռքահայ եւ Հայաստանեան գրողներ, արեստագէտներ եւ մտաւորականներ:

Անշուշտ, ըստ բնական օրէնքի, «Նոր էջ»-ն էլ շուրջ կէս դար գործունէութիւնից յետոյ քայքայեց 1930 թականին: Որոշներին դաժան մահը խլեց եւ ապրողներն էլ ցրիւ եկան: Ներկայում «Նոր էջ» -ականներից երեք հոգի բնա-կում են Ամերիկայում եւ միայն երկու հոգին Թեհրանում են գտնուում եւ իրարից անջատ գործունէութիւն ունեն:

Հարկատր է իրաքահայրին հակիրճ կենսագրականներով ներկայացնել:

Հրանդ Ֆալեան 1884 - 1966

Բուն անունով Սեյրոն Ղարիբեան, ծնել է 1884-ին Ռաշտ քաղաքում: Տասը տարեկանից փոխադրել է Թեհրան, սովորել է Թեհրանի Հայկազեան եւ Գասպարեան դպրոցներում: Ապա անցել է Նոր Ջուղա: Իսկ 1910-ից հաստատել է Թիֆլիս քաղաքում: Իր առաջին պատմը-ւածքը՝ «Թշնամիները» լոյս է տեսել Բաքու քաղաքում 1908 թականին: Կովկաս գտնած տարիներին աշխատակցել է «Պսակ», «Մուրճ» եւ «Նոր Հոսանք» թերթերին: 1933 թականին վերադարձել է Թեհրան եւ աշխատակցել «Վերածնունդ», «Արուսեակ», «Նաւասարդ», «Արփի» եւ «Պահակ» թերթերին, ամսագրերին: Նաեւ «Նոր էջ» պարբերագրքին: Նա հիմնադիր անդամներից մէկն է եղել «Նոր էջ» գրական խմբակցութեան: 1961-ին հրատարակել է իր երկերի ժողովածուն՝ «Նոր Աշբերը»:

Հրանդ Ֆալեանը ներկայանում է իրանահայ արձակի ամենատաղանդաւոր դէմքը:

Մահացել է Թեհրանում 1966 թականին:

Դել (Մարգար Ղարաբեգեան) 1901-1976

Ծնել է Թեհրան քաղաքում: Սովորել է Թեհրանի եւ Նոր Ջուղայի հայկական վարժարաններում:

Նկարչութիւն է ուսանել Զամալ-օր-մուքի դպրոցում:

Հրատարակել է «Իմ երգերը» 1947-ին, «Այս երկար ճամբան» 1963-ին եւ «Մրտի ճայներ» 1947-ին:

Գեղ իրանահայութեան ամենափրփած եւ ժողովրդի լայն խաւերի ամենամանօք բանաստեղծն է: Նա հիմնադիր անդամներից է «Նոր էջ» գրական խմբակցութեան, իսկ 1924-25 թականներին խմբագրել է «Միտք» միութեան «Նոր Պատգամ» ամսագիրը, որը միայն 14 համար լոյս տեսաւ: Նա իրանահայ գրական կեանքի եռանդուն մասնակիցներից էր, նաեւ ճանաչած գեղանկարիչ:

Նրա գործունէութեան յիսնամեայ յոբելեանը տօնել է 1974-ին: Նոյն ժամանակ հրատարակեց նրա «Մրտի ճայներ» ժողովածուն:

Գեղ մահացաւ Թեհրանում 1976 թականին:

Աշոտ Ասլան 1907-1966

Բուն անունով Աշոտ Ասլանեան, ծնել է 1907-ին Թեհրանում: Կրթութիւնը ստացել է Թեհրանի Ամերիկեան Կոլէջում: Մինչեւ իր կեանքի վերջը ծառայել է բանբերում: Իր առաջին գրածքը լոյս է տեսել Հայկ Գարագաշի

«Վերածնունդ» շաբաթաթերթում 1930 թականին: Հիմնադիր անդամ էր «Նոր էջ» գրական խմբակցութեան: 1957-ին հրատարակեց իր բանաստեղծութիւնների ժողովածուն՝ «Եթէ Ապրի» խորագրով: Գործ է ածել նաեւ «Ա. Ասլան» ծածկանունը:

Մահացաւ 1966-ին: Իր մահից յետոյ 1983-ին լոյս տեսաւ նրա բանաստեղծութիւնների ամբողջական ժողովածուն «Գիշերը Բարի է» անունով:

Աշոտ Ասլանը անաղմուկ ստեղծագործող էր: Մեզ բողբ է մի շարք խոհական, ինքնուրոյն շեշտով բանաստեղծութիւններ: Նրա պոեզիայի շաղախը՝ մարդասիրութիւնն է, անհագուրդ մարդու հոգեկան զուսպ տառապանքը եւ կիրք կեցածքը:

Գեղան Սկրոչեան 1908 - 1952

Ծնել է Իրանի Եագղ քաղաքում: Բարձրագոյն կրթութիւնը ստացել է Անգլիայում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ստանձնել էր անգլիական Ռոյթեր գործակալութեան Իրանի մասնաճիւղի կառավարիչի պաշտօնը, որի պատճառով Մոսկուայի վարչապետութեան օրէին բանտարկեց, ուր Ֆիզիքապէս բոլորովին մաշեց եւ բանտից ազատելուց յետոյ մահացաւ 1952 թականին:

Գեղանը «Նոր էջ»-ի հիմնադիր անդամներից էր: Նրա թերթածները լիրիկական էին, դժբախտաբար Գեղամի բանաստեղծութիւնները առանձին գրքով չեն հրատարակել:

Արա 1908 - 1989

Արա Տեր Հովհաննիսեանը ծնել է Թեհրանում: Աւարտել է Թեհրանի Հայկազեան ուսումնարանը: Հիմնադիր անդամներից է «Նոր էջ»-ի: Գրել է քնարական թերթածներ: Պարսկերէնի է թարգմանել եւ հրատարակել բազմաթիւ գրական գործեր:

Արան յայտնի է դարձել որպէս երգիչ, կոնցերտներ է տւել Թեհրանում եւ Երեւանում: Նա երգում էր Գալենդերեանի ձայնագրածները:

Չորայր Սիրգայեան 1916 - 1964

Ծնել է 1916 թականին Թեհրան քաղաքում, հայրը հանրահռչակ գրականագէտ, թարգմանիչ եւ Իրանի Ազգային Խորհրդարանի հայ պատգամաւոր Յովէտի Սիրգայեանն էր: Աւարտել է հայկական դպրոցը, ապա սովորել է Թեհրանի Ամերիկեան Կոլէջում:

Իր առաջին գրածքը հրատարակել է «Վերածնունդ» շաբաթաթերթում եւ մշտական աշխատակիցն է եղել նոյն թերթի:

Չ. Սիրգայեանը 1936 թականից սկսած միացաւ «Նոր էջ»-ին եւ դարձաւ այդ գրական խմբակցութեան եռանդուն անդամներից մէկը: Նրա թերթածների առաջին ժողովածուն «Թաց մայրը» որպէս «Նոր էջ»-ի մատենշար լոյս տեսաւ 1957 թականին, իսկ իր մահանից յետոյ, նրա ամբողջական գործերը էլի «Նոր էջ»-ի միջոցով լոյս ընծայեց 1965-ին:

Ճար. էջ 13-ում

Ուլքե՞ր են գիտակից ծնողները

Մելինե Փափազեան



Եթէ նման հարց տանք մեր ծնողներին, ապա նրանք անմիջապէս կը պատասխանեն. «Այն ծնողները, որոնք զոհուում են իրենց զաւակի համար»: Ի՞նչ է նշանակում «զոհուել»: Դա նշանակում է, որ պէտք է զրկուես քո կողմից սիրուած բոլոր հաճոյքներից, եւ յետոյ,

երբ զաւակներդ մեծանան, նրանց ծանրաբեռեւ բազում անհասանելի ակնկալիքներով, ապա յուսախար լինես, երբ նրանք չկարողանան իրականացնել դրանց եւ ի վերջոյ դա արդիւնքը կը լինի զաւակների մէջ յանցաւոր զգացումների սերմանումը:

Օրինակելի ծնողները մինչ որեւէ բան անելը, նախ եւ առաջ պէտք է հոգան իրենց մասին: Նա իւրաքանչիւր օրւայ ժամերից, նուազագոյնը պէտք է մէկ ժամը տրամադրի ինքն իրեն: Այսինքն՝ անի այն ինչ, որ իր տըրամադրութիւնը կը բարձրացնի եւ իրեն բաւականութիւն կը պարգեւի. օրինակ՝ զբաղի ընթերցանութեամբ, զբօսայգում զբօսնի, կամ գնայ վարսատիրի մօտ, եւ այլն: Մա անհրաժեշտ գործօն է, քանի որ ծնողները անտրամադիր լինելու դէպքում, բոլորովին համբերութիւն չեն ունենում առողջ դաստիարակութիւն տալու համար իրենց փոքրիկին:

Ծնողները իրենց վարքով օրինակ պէտք է ծառայեն իրենց զաւակներին: Փոքրիկները կապուում են իրենց ծնողներին, քանի որ նրանց որպէս հերոս են ընկալում:

Ուրեմն՝ ծնողները իրենց հաղորդակցութեան միջոցով եւ իրենց խնդիրները լուծելու ձեւով օրինակ են հանդիսանում իրենց զաւակների համար: Եթէ նրանք որոշ խընդիրներ անտեսում են, նոյնը եւ կանեն իրենց զաւակները: Եթէ ծնողները միմեանց վարկաբեկում են, մեղադրում կամ հարսածում՝ երեխաները ընդօրինակում են նրանց վարքերը:

Ուրեմն՝ ծնողները պէտք է ոչ միայն իրենց անձնական խնդիրների վրայ աշխատեն, այլ նաեւ միմեանց հետ յարաբերելու մասին մտածեն:

Օրինակ՝ ծնողները պէտք է քիչուր կանգնեն իրենց զաւակներին, եւ դա պէտք է դրսեւորի ոչ միայն նիւթապէս, այլ նաեւ հոգեպէս: Այսինքն՝ զաւակի կողքին լինելու նրան ընդունել եւ սիրել այնպէս՝ ինչպէս որ կայ, առանց որեւէ պայմանի, նոյնիսկ, եթէ նրա կարողութիւնները եւ ընդունակութիւնները սահմանափակ լինեն:

Երեխաները շատ են ազդուում եւ վիրաւորում, երբ իրենց արագը քննադատում, կամ փորձում է քիտու կերպով դաստիարակել նրանց:

Նրանք միշտ սպասելիք ունեն, որ ծնողները իրենց պաշտպանեն եւ բն ու քիչուր լինեն, իսկ երբ ծնողները միանում են ազգականներին եւ վարկաբեկում իրենց զաւակներին, փոքրիկը սկսում է հոգեպէս չարչարել:

Օրինակ՝ ծնողները տարբերութիւն չեն դնում զաւակների միջեւ: Արդէն առանց այդ էլ բնական մրցակցութիւնը առկայ է նրանց մէջ: Ծնողները կարող են աւելաց-

նել կամ պակասացնել այդ մրցակցութիւնը: Եւ սա կարող է փոքրիկին օգնել այնքան ժամանակ, մինչեւ նա ինքը կարողանայ լեզու գտնել իր մրցակից քոյրերի, եղբայրների, ընկերների եւ նոյնիսկ գործակիցների ու բարեկամների հետ:

Ուրեմն եզրակացումն հետեւեալն է՝ ծնողները պարտաւոր են անդրադառնալ իրենց զաւակներից իւրաքանչիւրի խառնուածքին եւ բնատրութեան գծերին, նրանց մէջ եղած տարբերութիւնները արժէքաւորել, գնահատել, քաջալերել, եւ որ ամենակարեւորն է երբէք չպնդել, որպէսզի նրանք ձգտեն նմանել իրար կամ ունենան նոյն հետաքրքրութիւնները: Օրինակ, եթէ մի եղբայր ջութակ նագելու ձգտում ունի, երբէք պէտք չէ ստիպել, որպէսզի միւսն էլ նոյն ձգտումն ու ցանկութիւնը ունենայ, քանի որ միւսը կարող է ուղղակի երաժշտութեան հանդէպ հակամտութիւն ունենալ: Եւ ընդհակառակը եթէ, նրա մէջ նուազատու է գծագրութեան կամ նկարելու ճիւղը, ապա պէտք է նրան օգնել, զարգացնել, քաջալերել այդ սերը՝ յատուկ դասընթացներով կամ ցուցահանդէսներ յաճախելով: ■

Նոր էջ...

Շար. էջ 12-ից

«Նոր էջ» թիւ 10 եւ 13 գրքերի խմբագիրը եղել է Ջ. Միրզայեանը: Լաւ տիրապետելով՝ անգլերէն, Ֆրանսերէն, ռուսերէն եւ պարսկերէն լեզուներին, կատարել է մի շարք արժեքաւոր թարգմանութիւններ: Առանձին գրքոյկներով հրատարակել է՝ «Բարաթահերի քառյակները», Դաստատեսկու «Հեզիկը եւ Մարք Թո՛ւլյի», պատմաժանրը: Նրա Խոշոր եւ կարեւոր արժէք ներկայացնող ուսումնասիրական, թարգմանչական հեղինակութիւնն է՝ «Պարսից գրականութեան Պատմութիւնը» որը շուրջ 1200 էջ պարունակութիւն ունեցող աշխատասիրութիւն է: Այս խոշոր աշխատանքը, նրա մահուանից յետոյ հարազատները ուղարկել են Հայաստան: Յանձնել է մատենադարնին:

Չորայր Միրզայեանը իր քերթածներում յայտնաբերում է անկեղծութիւն եւ դուրս է գալիս սովորական քարացած ընթրումներից: Դժբախտաբար վաղահաս մահը չթողնեց, որ նա հասնի կատարելութեան:

Չորայրը գրել է նաեւ բազմաթիւ արժեքաւոր պատմը-ւածքներ:

Չորայր Հովսեփի Միրզայեանը մահացել է 1964 թ. յուլիս 13-ին, Թեհրան քաղաքում: ■

Շար. 1

ՆԼԻՐԱՏՈՒԼՈՒԹԻՒՆ


Խաժակի ընտանիքի անդամները, իրենց մօր՝ տիկ. Յամիկ Պետրոսեանի յիշատակին «Լոյս» երկչաբաթաթերթին նւիրել են 100.000 ռիալ:

Հոգեբանական աշխարհում

Մերոպ Բալայեան
Դոկտոր-պրոֆեսոր
Սպահանի պետական համալսարանի

Հոգեբանական փորձարարական լաբորատորիա

Հոգեբանության մեծ երախտաւոր ժան Պի- աժէն եւ երեխայի հոգեկանի զարգացման փուլերը.



Հետաքրքիր պարագայ է, որ շեցարացի մեծ հոգեբան ժան Պիաժէն իր գիտական հետազոտութիւնները սկսել է ո՛չ թէ հոգեբանութեան, այն կենդանաբանութեան բնագաւառում:

Բայց երիտասարդ գիտնականը, շատ շուտ հակեց դէպի՝ նախ հոգեբանութեան ընդհանրական խնդիրները, իսկ կարճ ժամանակ յետոյ՝ մանուկին վերաբերող եւ, զլիսատրապէս, մանուկի հոգեմտաւոր կարողութիւնների կազմաւորման եւ զարգացման հարցերը: Ասեմք անմիջապէս, որ այսպիսի «պրոֆեսիոնալ» յատուկ կողմնորոշումը Պիաժէի մօտ ամբողջովին օրինաչափ եւ հասկանալի է, քանի որ նրան հենց սկզբից հետաքրքրել է իմացաբանութիւնը (պիստեմոլոգիա). թէ որտեղից, ինչպէ՛ս եւ ի՞նչ պայմաններում է ստեղծուում եւ կազմաւորուում մարդու ճանաչողութիւնը եւ կազմաւորուում շրջապատող աշխարհի վերաբերեալ:

Այդ հարցի ճիշտ եւ գիտականօրէն համոզիչ պատասխանը գտնելու համար, Պիաժէն բաւական շուտ անդրադարձաւ, թէ պիտի դիմել մանուկի հոգեկանի զարգացման ուղեծիրին՝ ծննդեան առաջին վայրկեանից մինչեւ հասուն տարիքը (16 տարեկան, ըստ Պիաժէի, 18՝ ըստ ուրիշների):

Ինչո՞ւ այդպէս: Որովհետեւ չափահասի մօտ, (18-ից վեր) գիտելիքների ձեռքբերումը կատարուում է գրեթէ միշտ ուղեղային այնպիսի մեխանիզմների միջոցով, որ արդէն իրենց լրումին են հասել շնորհիւ միջավայրի եւ մասնատրապէս կրթութեան, դաստիարակութեան վերափոխիչ ազդեցութիւններին:

Հետեւաբար, միմիայն մանուկին մօտիկից՝ առարկայօրէն եւ տքնաջանօրէն հետազօտելով հնարաւոր է վերոյիշեալ մեխանիզմների սաղմնաւորումը եւ զարգացումը: Այլ կերպ ասած՝ դրանց վերաբարող բոլոր մանրամասնութիւնները եւ ի վերջոյ օրինաչափութիւնները բացայայտել եւ ուսումնասիրել:

Ժան Պիաժէն աւելի քան վաթսու տարի (նա մահացաւ 1980-ին, 84 տարեկանում) մինչեւ իր բեղուն կեանքի վերջին շաբաթները տքնաջանօրէն շարունակեց պեղել մանուկի, դեռահասի եւ պատանու աճի զարգացման փուլերը: Նա իր կեանքի վերջին շրջանում, չնայած սկսեց

օգտագործել նաեւ գիտահետազօտական տարրեր մեթոդներ (ինչպէս օրինակ՝ հոգեբանական տեստեր, հարցաքննութիւններ եւ վիճակագրական միջոցներ ու տեսլանքներ), սակայն նրա նախասիրած մեթոդը միշտ էլ մնաց ուշադիր դիտարկումը մանուկների, եւ միաժամանակ նրանց հարց ու փորձի ենթարկելը:

Պիաժէն նախ սկսեց դիտարկել իր իսկ զաւակներին, յետոյ՝ հանրակրթական դպրոցների աշակերտներին: Գիտնականը դիտում է այդ երեխաներին, երբ նրանք խաղում են. նրանց խօսեցնում է, առաջարկում լուծել փոքրիկ, գործնական խնդիրներ: Այսպիսով՝ Պիաժէն եզրակացնում է, որ մանուկի մօտ իր շրջապատի ճանաչողութիւնը կատարուում է ըստ երկու իրար լրացնող մեխանիզմի՝ 1.յարմարեցում (Accomodatin) եւ 2.խրացում (Assimilation):

Ընորհիւ այս երկու մեխանիզմների մանուկը յաջողում է ձեռք բերել մի կացութիւն, որ Պիաժէն կոչում է *համակերպում (Adaptation)*: Պիաժէն այս վերջինը համարում է մարդկային ուղեղի ամենակարեւոր ֆունկցիան, որի վրայ հիմնւած է երեխայի յետագայ հոգեմտաւոր ամբողջ աճը: Այսպիսով, ըստ Պիաժէի, նորածինը հենց սկզբից, բացի իր բնածին հակազդեցումներից, օգտուում է նաեւ արտաքին աշխարհից ստացած գրգռներից, որոնք իւրովի ընկալուում, մշակուում են եւ դառնում են իւրաքանչէր սխեմաներ (Schemo), որոնք իրենց հերթին օգտագործելու են երեխայի կողմից յետագայ փորձերի ժամանակ: Այս պրոցեսը անընդհատ շարունակելու է, մինչեւ հարստացնի երեխայի մտաւոր պաշարը եւ բազմատեսակ կարողութիւնները. ուրիշ խօսքով՝ մանուկը բնաւ չի գոհանում միայն ստանալով տպաւորութիւններ, այն նաեւ ակտիւօրէն կառուցում է իր հոգեկանը: Այդ նպատակի համար նա գտնում է անհրաժեշտ նախամիջոցներ իր մէջ եւ իր շրջապատում: Երբ մանուկի հոգեկանի մի յարկը կառուցւած է արդէն, ապա հնարաւոր է (եւ միայն այդ պարագային հնարաւոր է) կառուցել յաջորդ հերթական յարկը (այս յաջորդականութիւնը, ըստ Պիաժէի, անխուսափելի է): Այդ նպատակով, նախկինում ձեռք բերւած արդիւնքները (սխեմաները) կարող են օգտագործել նոր սինտեզի կառուցման մէջ:

Պիաժէն այս կառուցման եռ ու զեռի մէջ, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ հենց երեխայի հոգեմտաւոր աճը, գատորոշում է բազմաթիւ փուլեր (ստադիա): Իսկ մինչեւ 2 տարեկան՝ երեք զլիսատր փուլ:

Առաջին փուլը՝ *զգայնօ-շարժողական փուլ (Sensorimoteur)*, որի ընթացքում երեխան ձգտում է վերաբնութեւն մի արդիւնք, որ ձեռք է բերւած պատահականօրէն: Օրինակ՝ եթէ յանկարծ, պատահականօրէն, երեխայի ձեռքը դիպչում է մի թելի, որ հնչեցնում է, ենթադրենք, օրորոցի վրայ կախւած զանգակները (եւ նրան հրճանք պատճառում), ապա, անկասկած, երեխան կրկին բազմաթիւ փորձեր կանի վերաբնութեւն զանգակների հնչեցումը: Ընդ որում նրա վրիպած եւ ոչ դիպուկ շարժումները հետզհետէ կը նւազեն, փոխարինելով նպատակաւոր, դիպում եւ ճշգրիտ շարժումներով, որից յետոյ նա արդէն կը սովորի ուզած վայրկեանին հեշտութեամբ զանգակները հնչեցնել:

Փոսական

Երկրորդ փուլ- որի ընթացքում մանուկի մտ սկսում են երեւան զալ «կամային նպատակամղում վարմունքներ» (Conduites intentionnelles) օրինակ՝ մանուկը տեղաշարժում է տետա արձեղը՝ իր նպատակին հասնելու, այսինքն ուզած առարկան ձեռք բերելու համար: Անշուշտ, այն պայմանով, որ այդ առարկան երեխայի տեսադաշտում գտնուի: Այլ կերպ, նա որել է փնտռուող չի կատարի: Փորձում է, երբ այդ առնում փուլի մէջ գտնուող երեխայի կաթի շիշը, իր աչքի առաջ թագցնենք իր բարձի տակ, նա կորսում է շիշը չի փնտրի եւ, եթէ կուշտ լինի, որել է հակազդեցութիւն ցոյց չի տայ: Իսկ, քաղցած լինելու դեպքում կը սկսի լացել:

Երրորդ փուլ- Դա ակտի փորձերի ժամանակաշրջանն է: Օրինակ՝ մանուկը իր բնագոյաւիճ-ֆունկցիոնալ խաղերի ընթացքում նետում է մի իր, որից յետոյ նոր միջոցներ է փնտրում այդ առարկան դէպի իրեն բերելու համար: Եւ, սա արդէն լրի ողակական փոփոխութիւն է մանուկի հոգեկանի զարգացման մէջ:

Այս 3 յաջորդական փուլերից յետոյ, երկու տարեկանից, ծնում է միջ-օպերատիւ (preopératoire) մտածողութիւնը: Երեխան կարող է պատկերացնել որոշ շարժումներ, առանց գործադրելու անխուսափելիօրէն (այսինքն՝ դրանց գործադրութիւնը պարտադիր չէ): Այս փուլը սիմտոլիկ խաղի՝ կամ լեզու բացելու փուլն է: Երեխան, բայց դեռ պարփակած է իր եսակենտրոնացման մէջ (Egocentrisme): Այսինքն՝ դեռ իրեն համարում է «Ամենակենտրոն» եւ ամէն ինչ դիտում էր դատում է միմիայն իր տեսանկիւնից եւ իր «շահերից» ելնելով: Այս ժամանակաշրջանում մանուկը դեռ հեռու է հայեացքների համակարգից (systeme) եւ ամէն առարկայ կամ երեւոյթ ընկալում է առանձնակի՝ առանց ընդհանրացումների: Տրամաբանութեան որոշ տարրեր սկսում են երեւան զալ երեխայի մտածողութեան մէջ, բայց նրանք ընդունակ են միայն մանուկին մի որոշ հասկացութիւնից հանգեցնել մի ուրիշ հասկացութեան: Մեր խօսքը ակտի յստակ դարձնելու համար բերենք մի օրինակ հենց Պիաժէի դիտարկումներից: Գիտնականի փոքրիկ աղջնակ Օաքլինը մրսած է եւ հիւանդ: Հայրը պատրաստում է նրան խմեցնել թէյ զանգաֆիլի՝ շորացրած դեղին տերեւներով: Օաքլինը նարինջ է պահանջում: Հայրը պատասխանում է, որ «նարինջները դեռ կանաց են»: Օաքլինը քիչ մտածելուց յետոյ ցոյց է տալիս զանգաֆիլի դեղին տերեւները եւ ասում՝ «Չանգաֆիլի տերեւները դեղին են, ուրեմն նարինջներն էլ հիմա, դեղին են» (երեխան այս տարիքում միայն ներկայ ժամանակն է ըմբռնում):

Այսպիսով պզտիկ Օաքլինը կարողանում է արդէն որոշ իմաստով «տրամաբանել». այսինքն 2 հասկացութեան մէջ մասնախտով «տրամաբանական» կապակցութիւն ստեղծել որոշ ժամանակային ֆոն-պատճառի վրայ (դեղնութիւնը, որ հասունացման նշան է եւ ներկայ

ժամանակում զանգաֆիլի տերեւները դեղին են): Սակայն, պարզ է, որ սա իսկական տրամաբանութիւն չէ, այն «մակերեսային տրամաբանութիւն» է հիմնաւ «անալոցիան» (Analogie) մեխանիզմի վրայ, որ այնուամենայնիւ յաղթանակ է մանուկի համար, նախանշում փուլ համեմատած հոգեկանի զարգացման նախկին փուլերի հետ: Չէ՞ որ երեխան արդէն կարողացաւ որոշ չափով վերացարկում (Abstraction) կատարել, դեղնութեան զարգացարկ անջատել առարկաներից (նարինջ, զանգաֆիլ):

Ասենք, որ կլինիկական հոգեբանութեան բնագաւառում եւ Սպահանի մեր հոգեբանական լաբորատորիայում «տրամաբանութեան» վերոյիշեալ պրիմիտիւ փուլը յաճախ է նկատուել որոշ թերաւ, ակտի տարիքով, բայց սակաւամիտ երեխաների, որոշ հոգեկան հիւանդների եւ որոշ խիստ հարբած չափահասների եւ թմրամուկների մտ: Ոգեկից խմիչքների եւ թմրեցուցիչների մասին պիտի ասել, որ դրանց սխտեմատիկ գործածութիւնը, շատ յաճախ ենթակայի մտ երեւան է բերում տրամաբանելու եւ բանականութեան լուրջ խախտումներ եւ երբեմն նոյնիսկ հանգում է յուզական կամ մտային ետմղման (Regression affective ou interlectuelle):³

«Նմանեցման տրամաբանութիւնը» մանուկի մտ յիշեցնող մի ուրիշ պարագայ եւս առաջ բերեց Նոր Ջուդայում բնակող մի ընտախքում, երբ մայրը զիշերայ ժամը 11-ին, իրենից խնձոր պահանջող հիւանդ երեխային պատասխանում է որ «խնձորները հիմա քնած են»: Երեխան առարկում է, թէ՛ «փոքրիկ խնձորներն են քնած, մեծ խնձորները չոք քնած չեն»: Քանի որ երեխային ժամանակին ասած էր, որ «երեխաները շուտ են քնում, որովհետեւ փոքր են, մեծահասակները ուշ են քնում, որովհետեւ մեծ են»: Ի միջի այլոց, զարգացման այս փուլում, երեխան, ըստ Պիաժէի, բոլոր անշումն առարկաներին շնչաւոր է կարծում: Ուստի խնձորներն էլ կարող են քնել:

Հետաքրքիր եւ նշանակալից օրինակ է նաեւ այն երեխայի պարագան, որ խիստ զարմացել էր, երբ նկատել էր իր կարմիր փուչիկը պայթելուց եւ միանգամայն տափաւելուց յետոյ էլ կարմիր էր մնացել: Նրա տրամաբանութեամբ, փուչիկի կտրութիւնը, գոյնը, թեթեւութիւնը մի անբաժանելի որակական անբոլորութիւն են կազմում, եւ երբ որակական յատկութիւններից մէկը վերացաւ, միւս որակական յատկութիւններն էլ, անխուսափելիօրէն պիտի վերանան (globalisme):

Կամ այն երեխան, որ Ֆրանսիայում, ինձ յամառօրէն պնդում էր, թէ հեշակաւոր շամպայն գինին պատրաստում է միմիայն մեծ մատերի վրայ կտարելու համար, քանի որ հեռուստատեատեատեամբ տեսել էր, որ՝ այդ, սովորութիւն-աւանդոյթ է, երբ մի մեծ մաւ առաջին անգամ ջուր է ընկնում, նրա վրայ շամպայն են կտարում՝ նրան մի տեսակ բարի երբ մաղթելու համար: ■

1 Նրանք այն խաղերն են, ըստ Պիաժէի, որոնց ընթացքում երեխան սիմտոլիկ կերպով որել առարկայ փոխարինում է մի ուրիշ առարկայով: Օրինակ՝ փայտը անցնում է ձի եւ ժամերով ձիավարում, զիտակցելով հանդերձ, որ դա միայն փայտ է:

2 Բուժիչ բոյս՝ ճանաչած հին բժշկութեան մէջ (նոյնպէս հայ հին բժշկութեան մէջ) որ ներկայումս էլ որոշ ընտանիքներում գործածում է:

3 Regression, ետմղում դէպի յուզական եւ մտային զարգացման նախկին փուլերը, երբ չափահասը գնում է դէպի երեխայացում:

ԾՉ ՕՉ Ի Չ ԾՊ â Æ ì Û Չ ê Û ° ՃÀ

Երիտասրդների հոգեբան

Չպետք է կուրորեն տարբել համակարգչով



Համակարգիչները 21-րդ դարի աչքերն են: Եւ այսօր, տեխնիկայով այսքան հագեցած դարաշրջանում, դժուար թէ գտնի մի բնագաւառ, որտեղ համակարգիչների օգտագործումը, եթէ ոչ առաջնային, ապա՝ կարեւոր չհամարի: Եթէ մի երկու

տասնեակ տարի առաջ Հայաստանում այդ բնագաւառում համատարած տոգիտութիւն էր, ապա այսօր (ոչ միայն մասնագիտութիւնից ելնելով) դեռ վաղ տարիքից է սկսում ծանօթութիւնը համակարգչի հետ: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ երեխաները աւելի արագ եւ աւելի հեշտ են իւրացնում նորը եւ յաղթահարում նորի հետ կապւած իւրաքանչիւր դժարութիւն:

Երեխաներին համակարգիչներին հաղորդակից դարձնելու համար կազմակերպւում են բազմաթիւ դասընթացներ, բացի այդ, մանկական ժամանցում այսօր հեծանիւն ու գնդակի միջոցով են համակարգչային խաղերը: Եւ ծնողներն էլ, ուրախանալով, որ իրենց երեխաները «չարութիւն» չեն անում, բակ դուրս գալ չեն ուզում, ամենեւին ուշադրութիւն չեն դարձնում, թէ իրենց երեխան քանի ժամ է անընդմէջ տրւում համակարգչային խաղերին...

Մասնագէտները նշում են, որ համակարգչի հետ տարուղ աշխատանքը երեխայի մէջ զարգացնում է տրամաբանական մտածելակերպ, կազմակերպւածութիւն, նպատակասլացութիւն: Սակայն այս ամէնի հետ մէկտեղ հարկ է իմանալ, որ այդ գերբնական մեքենան որոշակի վտանգ է պարունակում:

Յայտնի է, որ համակարգչի միայն էկրանը կարող է տարբեր տեսակի մագնիսական, ինֆրակարմիր, մանուշակագոյն եւ այլ ճառագայթների աղբիւր լինել: Դպրոցներում օգտագործող համակարգիչների ճառագայթումը համեմատաբար ցածր է եւ առողջութեան համար անվտանգ: Սակայն եթէ որեւէ համակարգիչ խափանւած մաս ունի, ապա ճառագայթման մակարդակը կարող է բարձրանալ: Եթէ որոշել էք աշխատել համակարգչով, ապա այն օգտագործելուց առաջ անհրաժեշտ է ստեղծել աշխատելու համար կարելուրագոյն պայմաններ՝ կարգաւորել տեսադաշտը, էկրանի լուսարձակումը: Էկրանը պէտք է գտնի աչքերից 50-55սմ հեռաւորութեան վրայ: Կարճատես երեխաները չպէտք է առանց ակնոցի նայեն էկրանին: Անշարժ լարւածութիւնը թուլացնելու համար երեխան

պէտք է նստի այնպէս, որ էկրանի կենտրոնը կամընկնի իր տեսադաշտի հետ: Ցանկալի է արձույտ փոխարէն նստել քիչնաթոյն կամ բազկաթոյն, քանի որ այդ դէպքում քիչուցք քիչ կը լարի: Համակարգչային խաղերը աւելի յոգնեցուցիչ են, քան խնդիրներ լուծելը կամ կարդալը, քանի որ անընդմէջ փոփոխութիւնները պահանջում են արագ ռեակցիա եւ մեծ լարւածութիւն: Երեխաներին խորհուրդ չի տրւում դպրոցից, դասերից յետոյ անմիջապէս նստել համակարգչի առջեւ, քանի որ այն ազդում է ոչ միայն տեսողութեան, այլեւ նեարդային համակարգի վրայ:



Հոգեբանների համոզմամբ՝ այն երեխաները, ովքեր տեսկանօրէն նստում են համակարգչի առջեւ՝ դժարութիւններ են ունենում տարեկիցների հետ շփուելու:

Բարձր դասարանի աշակերտներին թոյլատրւում է առանց ընդմիջման համակարգչի առջեւ նստել 25-30 րոպէ, 7-8-րդ դասարանցիներին՝ 15-20 րոպէ, որից յետոյ անպայման տասը րոպէ ընդմիջում: ■

Նորամուտների գալուստը բարի

Ալէ եւ Արփա Շահբազեաններ (երկորեակներ)

մայրը՝ Առիտ
հայրը՝ Արարատ



Մեծուա Իսկանդարեան
մայրը՝ Վիոլետ
հայրը՝ Ռոբերտ

Փոդոյթա Ամիրեան
մայրը՝ Այլին
հայրը՝ Վարուժան

Նառէ Բեշիշեան
մայրը՝ Իւետ
հայրը՝ Իւրիկ

Ասի Մարկիս
մայրը՝ Կարինէ
հայրը՝ Ալբերտ



Լոյս է տեսել եւ վաճառւում է՝ Հայ-Իրանական մշակութային եւ հասարակական եռամսեայ «Ապագա» հանդէսը:



آپاگا

Ինչպես պաշտպանել լինդերի հիւանդութիւնից



Դոկտոր Ռ.Ջ.Գեներո.ԴԴԱ.ՓՇԴ
«Շելթ» ամսագրից
թարգմանեց
Յ. Էրաչեանը

Այն չի սպառնում
միայն Ձեր բերանի խոռոչի
առողջութիւնը

Իւրաքանչիւր հինգ չափահաս անհատներից չորսը լինդերի (pezio-dontal) մի որեւէ անհանգստութիւն ունեն սկսած ուռչած կամ արհիւնող լինդերից մինչեւ թուլացած ատամներ:

Աւերածութիւնը չի սահմանափակում բերանով լինդերի հիւանդութիւնը, ինչպէս ցոյց են տել վերջին ուսումնասիրութիւնները, կարող է հող պատրաստել սրտի հիւանդութեան համար եւ բարդութիւններ առաջացնել շաքարախտից տառապողների եւ յի կանանց համար:

Ինչպէս է առաջանում լինդերի հիւանդութիւնը

Լինդերի հիւանդութեան պատճառը մանրէներն (բակտերիաները) են, որ աճում- բազմանում են plaque-ի մէջ. սա այն նիւթն է, որ գոյանում է ատամ- լինդ սահմանագծի վրայ կերակրի մնացորդների կուտակումով:

Եթէ խոզանակելով չմաքրենք plaque-ները, ապա դրանք կարծրանում եւ ի վերջոյ վերածւում են իւրայատուկ նստածքի (ealeulus կամ tastas) որը անհարթութիւններ առաջացնելով ատամների վրայ, պատճառ է դառնում, որ plaque-ներն էլ աւելի ամուր կպչեն ատամներին:

Plaque-ի մէջ եղած մանրէները արտաթորում են թունաւոր նիւթեր (toxins), որոնք բորբոքում են լինդերը, կարմրութիւն եւ այտոց պատճառում ու լինդերը ատակ դարձնում արհիւանոտութեան: Այս վիճակը ճանաչւած է gingivitis անունով:

Եթէ չկատարուի բորբոքումը, լինդերը վերջ ի վերջոյ մահանջում եւ հեռանում են ատամներից: Մանրէները կուտակւում են ստեղծած բաց տարածութիւնների (գրոպանիկներ) մէջ եւ առաւել զարգ տալիս հիւսկէների ոչընչացմանը:

Ժամանակի ընթացքում բորբոքումը եւ վարակումը անբում են ոսկորը եւ լինդային հիւսկէն: Այսպիսով թուլանում եւ ընկնում են ատամները:

Թէեւ լինդերի հիւանդութիւնը ունի իր բացայայտ նշանները, սակայն կարող է եւ աննկատ մնալ բերանի մէջ, նոյնիսկ եթէ չեն արհիւնում լինդերը: Նախագոյն շարժող թեթեւ նշաններն են՝ բերանի տեսական վատ հոտը, ատամների կամ արհեստական ատամնաշարի իրար վրայ նստելու դիքքի փոփոխութիւնը եւ վատ յարմարելը (ծամելու ընթացքում)...

Լինդերի հիւանդութիւն կարող է ունենալ իւրաքանչիւր անհատ: Բայց կան մի քանի ազդակներ, որ մարդկանց դնում են յաւելեալ ռիսկի առջեւ: Դրանք են՝ ծխելը, շաքարախտը, հոգեկան ճնշումները, ոսկրի կարծրութեան պակասը եւ ...

Առողջութեանը սպառնացող վտանգներ

Լինդերի ծանր վիճակը (periodontitis) մեզ կանգնեց-նում է առողջութեանը սպառնացող լուրջ վտանգների առաջեւ...

Սրտի հիւանդութիւն

Լինդերից առաջացած հիւանդութիւն ունեցողները համարեա երկու անգամով առաւել ենթակայ են սրտի մահացու հարուած ստանալու՝ քան առողջ լինդեր ունեցողները: Այնուամենայնիւ, վերջին հետազոտութիւնները ցոյց են տալիս՝ թեթեւ լինդային հիւանդութիւնը (gingivitis) որեւէ կերպով չի առնչւում սրտի հիւանդութեան:

Լինդերի հիւանդութիւնը ինչպէ՞ս է կարող վնասել սրտին

Միեւնոյն մանրէները, որ պատճառ են դառնում լինդի հիւանդութեան, մի շարք վնասակար նիւթեր արտաթորելով, սրտանոթային plaque-ներ են գոյացնում. սրանք այն կպչուն նստածքներն են, որ խոցում են երակները եւ ճամբայ հարթում սրտի կաթածի համար:

Շաքարախտ

Շաքարախտով տառապողները առաւել ենթակայ են լինդերի հիւանդութեան եւ անյայտ պատճառներով դժարութեամբ են կարողանում վերահսկել իրենց արեան շաքարի չափը: Որքան աւելի յառաջացած է լինում լինդերի հիւանդութիւնը, նոյնչափ դժարանում է արեան մէջ կոնտրոլի տակ պահել շաքարի չափը:

Յոլութիւն


Լինդերի հիւանդութեամբ տառապող յի կանայք կանգնած են տարածւած (կան-խահաս) եւ տհաս մանուկներ աշխարհ բերելու վտանգի առջեւ:

Ինչպէ՞ս կատարել եւ ետ մղել լինդերի հիւանդութիւնը

Բերանի առողջապահական այն գործընթացը, որ կանխում է լինդերի հիւանդութիւնը՝ կարող է նաեւ կատարել այն, եթէ կիրառուի կանուխ:

Խոզանակել

Խոզանակել մի կակուղ խոզանակով օրական երկու անգամ եւ ամէն անգամ երեք րոպէ տետողութեամբ: Չպիտի ատամները մաքրել կողից-կող, կամ շրջապատոյտ շարժումով, այլ խոզանակը պիտի պահել լինդերի դէմ 45 աստիճան թեքութեամբ եւ խոզանակել լինդին սահմանագծից դէպի վեր մինչ ատամների գագաթը: Նաեւ պիտի



Առողջապահական

խոզանակել իրաքանչիւր ատամի ներքին- հետեւի- մակերեսը:

Իսկ ինչ վերաբերում է արդիական կեռ կոթով խոզանակներին, պիտի ասել, որ դրանք հետապնդում են միայն գեղագիտական նպատակ եւ զուրկ են որեւէ առաւելութիւնից սովորական տարբերակների համեմատութեամբ:

Էլեկտրական խոզանակները գերադասելի չեն, սակայն օգտակար են այն անհատների համար, ովքեր յօղասլի կամ այլ պատճառով դժարութիւն ունեն ձեռքով խոզանակել իրենց ատամները:

Նորագոյն միջոցը այն է՝ գերձայնային ատամի խոզանակները, օգտուում են գերձայնային ալիքներից կերակրի մնացորդը եւ plaque մաքրելու համար: Բայց լատրակ ատամնաթելով եւ հնաձեւ խոզանակով էլ կարելի է արդիւնքի հասնել:

Ատամնաթելի գործածում

Ատամնաթել գործածէք օրական առնուազն մէկ անգամ (flossing): Թելը հերթաբար անցկացրէք իրաքանչիւր երկու ատամների արանքով, որպէսզի բաց չթողնի որեւէ ատամ: Թելը նրբօրէն սահեցրէք ատամներից մէկի կողմից դէպի վար մինչեւ լինդ-ատամ սահմանագիծ, ապա միւս ատամի վարից վեր:

Երբէք թելը քաշ մի օտք լինդի միջով:

Ատամնաթելեր կան, որոնք մոմապատած կան թեֆլոնայատ են եւ ուրիշներ՝ համեմատ: Ատամնաթելեր կան բարակ են լարի պէս, ուրիշներ՝ լայն ինչպէս ժայռէն: Ոչ մէկը, հիմնականում գերադասելի չէ միւսներից: Գործածէք ձեր նախասիրած տեսակը:

Վստահ լինելու համար, որ flossing-ի (լինդերի բորբոքում) ընթացքում մաքրել են բոլոր մատածքները (plaque) եւ ատամների արանքում եղած կերակրի մնացորդները, դիմէք հետետեալ քայլերին:

Օգտագործէք ռետինէ ծայրով գրգռիչ սարք կամ ատամների արանքը մտնող խոզանակ, որ ամրացած են մետաղեայ մի վոքը ձողիկի ծայրին: Այս տեսակ խոզանակը յարմար է այն անձանց, որոնց ատամները միմեանցից հեռու են մտած: Գրգռիչ սարքը կամ խոզանակը մտցրէք ատամների արանքը լինդի սահմանագծի վրայ եւ հետ ու առաջ շարժեցէք նրբօրէն:

Փորձէք օգտուել ջրի ճնշումով գործող էլեկտրական սարքից, որը ճանաչւած է water pick (ջրի փչկորիկ) անունով: Ջրի ուժգին հոսանքը տեղահան է անում կերակրի մնացորդները:

Բերան ողողելու լուծոյթ:- Այս կարգի լուծոյթներ կան, որոնց ginnigivits-ի դէմ օգտաւտութիւնը փաստուած է: Պիտակի վրայից ստուգէք, թէ որ տեսակն է արժանցել Ատամնաբոյժների Միութեան հաստատմանը:

Այցելէք ձեր ատամնաբոյժին:- Եթէ նոյնիսկ անում էք այն ինչ, պահանջում է կանուխաւոր ստուգողական քննութիւն եւ արհեստավարժ մաքրումներ՝ ատամնաբոյժի միջոցով:

Ընդհանրապէս, տարին երկու անգամը բաւական է. սակայն ոմանք պէտք ունեն առաւել յաճախակի ուշադրութեան, անկախ այն բանից, թէ որքան բժախնդրութեամբ են կատարում տնային մաքրումները:

Հարցրէք ձեր ատամնաբոյժին, թէ որն է լաւագոյն ժամանակացոյցը ձեր համար: Եւ իրաքանչիւր այցելու-

թեան ժամանակ պահանջէք, որ բժիշկը քննի եւ ստուգի, թէ՛ արդեօ՞ք ունեցել էք ոսկրային կորուստ:

Պայքարել առաջացած հիւանդութեան դէմ

Լինդերի հիւանդութեան (periodontitis) բուժումը յաճախ կատարում է արմատի «քերթում»-ով (sealing) եւ «հարթում»-ով (planing): Առաջինը հետացնում է plaque-ը եւ մատածքը արմատի մօտակայքից, իսկ երկրորդը հարթեցնում է արմատի մակերեսը՝ թոյլ չտալով, որ նորը plaque գոյանայ անհարթ մակերեսներում:

Բացառիկ պարագաներում՝ ծանր վիճակ, կարիք է զգացում վիրահատութեան դիմել, որպէսզի կտրուի, հատուկ լինդի տեղից պոկւած հիւսկէն եւ բուժի ոսկորը:

Periodontitis-ի բժժման մէջ ներառում են անտիբիոտիկներ եւ մանրէասպան դեղեր: Այդ միջոցները ուղղակի-օրէն լինդերին հասցնելու համար այսօր մշակել են մեթոդներ: Դրանցից կարելի է յիշատակել լինդերի թուլ-ցած մասերը ամրացնող անտիբիոտիկով «ժել»ներ (gels) եւ «մասնիկ»ներ (chips) որ



**ՈՍԿԷ
ՕՂԱԿՆԵՐ**

տեղադրում են գրպանիկների մէջ:■

ԼՈՅՍ երկշաբաթաթերթը ջերմօրէն շնորհաւորում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին:

- Անետ Խողաբախշեան - Արիւն Սուլէյմանի
- Անի Ամիրեան - Արմէն Նաւասարդեան
- Քարէն Խաչատրեան - Գելիկ Աբեղեան
- Աշխարուհի Օրուջեան – Դենրիկ Արդալեան
- Անետ Մինասեան – Մինաս Թահմազեան
- Անետ Յակոբեան – Ժոռնա Զէյնալեան
- Վայլին Քեշիշեան - Էդիւն Գուլգարեան
- Արմինէ Բարխուրդարեան – Սերժիկ Իսկանդարեան
- Անահիտ Ղազարեան – Մերուժան Սիրջանեան
- Վոլգա Բեզանօ – Սաքօ Մասիհի
- Ալենուշ Ալեքսանդրի - Էդրիս Մինասեան
- Ալինա Ասատրեան – Դրաչ Քեշիշեան

Ռեկորդ
RECORD

میل لنگ
خیابان شوش مابین میدان هرندی و
سه راه خیام شماره ۹۶۶ : تلفن : ۵۳۰۱۲۲۴

Մարզական

Հացագրոյց «ՐաՖՖի» Մ. Մ համալիրի բասկետբոլի թիմի հետ

«ՐաՖՖի» բասկետբոլի թիմը, մինչ այժմ մեծ յաջողութիւններ է արձանագրել մարզական ասպարէզում եւ իր յաջող ելոյթներով պատիւ է բերել մեր համայնքին: Մեր թղթակիցը մի հակիրճ հարցազրոյց է կազմակերպել վերոյիշեալ թիմի մարզիչ՝ տիկ. Էմմա Ծատրեանի եւ թիմի որոշ անդամուհիների հետ: Ստորեւ ներկայացնում ենք այդ հարցազրոյցը:



Շ. Տիկին Ծատրեան, կը խնդրենք տեղեկութիւններ ներկայացնել «ՐաՖՖի» Մ.Մ Համալիրի բասկետբոլի խմբի մասին:

Պ. Միութիւնում ունենք բասկետբոլի խմբեր, որոնց շարքին է պատկանում, «Մինի Բասկետբոլի» եւ *Երիտասարդական* խմբերը: Ես իմ 14 տարւայ աշխատանքի ընթացքում բազմաթիւ հայ բասկետբոլիստուհիներ եմ տւել Թեհրանի

եւ Իրանի հաւաքականի խմբին: Մեր խումբը ամէն տարի կանգնել է առաջին եւ երկրորդ պատույ պատանդանի վրայ: Հէնց այս ընթացիկ տարում մեր *Երիտասարդական* եւ *Մինի Բասկետբոլի* խմբերը հերթաբար գրանցին առաջին եւ երկրորդ տեղերը:

Շ. Եթէ հնարատր է ներկայացրէք խմբի անդամներին:

Պ. Մենք շնորհալի անդամներ շատ ունենք, որոնց շարքում են Փազա Մահմուդին, Թալին Թահմազեանը, Հերմինէ Մահդիան, Լինա Վարդանեանը, Արփինէ Սարգսեանը, Նարէ Արդէշիրեանը, Մեղեղի Շահնազարեանը, Անի Ղադիմեանը, Նարինէ Թահմազեանը, Ադրինէ Վարդումեանը, Նայիրի Բանդարեանը, Միւնէ Իսաղուլեանը, Մեղմիկ Քելիշեանը, Ռամոնա Ծատրեանը եւ շատ ուրիշներ:

Մինի Բասկետբոլի խմբի անդամները ներկայացնում են իրենց.

Նարինէ Թահմազեան- Ծնել եմ 1988 թականին: Սովորում եմ «Թունեան» դպրոցի առաջին ուղեցոյց դասարանում: 9 տարեկանից մասնակցել եմ «ՐաՖՖի» միութեան բասկետբոլի խմբի փորձերին: Խաղում եմ «Սենտր» գծում: Խնչպէս գիտէք մեր գլխատր մարզիչն է տիկ. Էմմա Ծատրեանը, որից մենք շատ բան ենք սովորում եւ պիտի սովորենք:

Անի Ղադիմեան- Ծնել եմ 1988 թականին, սովորում եմ «Արարատ» դպրոցում, խաղում եմ յարձակո-ղական գծում, իմ մարզիչներն են եղել տիկ. Էմման եւ տիկ. Ժենիան: Մեր քաղաքամասի դպրոցական մրցոյթ-ներում գրաւել ենք առաջին, իսկ ընդհանուր Թեհրանի դպրոցների մրցոյթներում երկրորդ ենք հանդիսացել:

Ադրինէ Վարդումեան- Ծնել եմ 1988 թականին, սովորում եմ «Թունեան» դպրոցում: Բասկետբոլը սկսել եմ 3-րդ տարրական դասարանից, խաղում եմ յարձակո-ղական գծում: Իմ մարզիչներն են եղել տիկ. Էմմա Ծատրեանը եւ օր. Իւետը:

Նայիրի Բանդարեան- Ծնել եմ 1988 թականին, սովորում եմ «Թունեան» դպրոցում եւ խաղում եմ կիսապաշտպանական գծում: Առաջարկում եմ իմ տարիքակիցներին, անպայման մասնակցեն որեւէ մարզաձեւի աշխատանքներին, քանզի մարզանքը մարդու մէջ աշխատելու եռանդ եւ ձիրք է ատեղծում եւ, որ ամենից կարեւորն է՝ մարդը առողջ է ապրում:

Միւնէ Իսաղուլեան- 12 տարեկան եմ, սովորում եմ «Արարատ» դպրոցի առաջին ուղեցոյց դասարանում: 3-րդ տարրական դասարանից եմ սկսել բասկետբոլի փորձերը եւ խաղում եմ «Սենտր» գծում: Խնդրում եմ ծնողներից թե ու քիկունք լինել, որպէսզի իրենց զաւակները հանգիստ հոգով կարողանան մասնակցել իրենց նախասիրած մարզաձեւի փորձերին:

Մեղրիկ Քելիշեան- «Արարատ» դպրոցի աշակերտուհի եմ, փորձերս սկսել եմ «Նայիրի» միութիւնից, որի



մարզիչներն էին՝ օր. Ժենիան, պրն. Արգիշտին եւ պրն. Լեւիկը: Իսկ հիմա փորձերս շարունակում եմ «ՐաՖՖի» միութիւնում:

Հրաժեշտ ենք տալիս, մեր սիրելի մարզուհիներին եւ նրանց մարզիչ՝ տիկ. Էմմա Ծատրեանին՝ մաղթելով նրանց նորանոր նաճումներ եւ նախանձեղի յաջողութիւններ: ■

Հարցազրոյցը վարեց Արփինէ Միսանեանը



ՕՅՑՅԻՕՅԻՅԻ

Խորը կսկիծով եւ ամենայն դառնութեամբ յայտնում ենք, որ իր մահկանացուն է կնքել անզուգական հայուհի եւ մայր՝

Յասմիկ Պետրոսեանը (Խաժակի)

«Լոյս» երկշաբաթաթերթի խմբագրական կազմը եւ նրա բոլոր աշխատակիցները իրենց խորագրացաւակցութիւններն են յայտնում Խաժակի ընտա-

Ճանաչե՛նք մեր սիսաններին

Տիգրան Պետրոսեան



Մեծ փառքի տիրացած, աշխարհահռչակ Տիգրան Պետրոսեանի թողած փառքն ու պատիւը հայ մարզանքի պատմութեան մէջ անջնջելի է: Բաւական է նշել, որ նա 6 տարի կանգնել է

աշխարհի ամենաբարձր պատանդանի վրայ:

Տիգրան Պետրոսեանը ծնւել է 1929 թ. Թբիլիսիում (Թիֆլիս): Նա դեռուս տարիքում արժանացել է Վարպետի կոչման: 1951 թ. նախկին Խորհրդային Միութեան մրցոյթներում գրաւեց երրորդ պատուար տեղը: 1952 թ. Ստոկհոլմ քաղաքում կայացած միջազգային մրցոյթում գրաւելով առաջին տեղը արժանացաւ «Միջազգային վարպետի» (Grand Master) տիտղոսին: 1959, 1961 եւ 1962 թականներին դարձաւ Խորհրդային Միութեան դափնեկիր: Եւ վերջապէս 1963 թականին յաղթելով աշխարհահռչակ մի այլ շախմատիստ Բուտիմիկին դարձաւ աշխարհի չեմպիոն: 6 տարի շարունակ նա դարձաւ աշխարհի չեմպիոն: Տիգրան Պետրոսեանը ճանաչւած էր որպէս *համբերատար* շախմատիստ: Նրա խաղաձևը «Պաշտպանողական» էր: Նրա ժամանակակից շախմատի մեծ վարպետները նրան անւանում էին . -« Մեծ լեռան անյաղթահարելի գագաթ»:



Մտային մարզաձևի վարպետը երբէք չթողեց իր սիրած մարզանքը եւ մինչեւ կեանքի վերջը չբաժանեց շախմատի Ֆիգուրաներից:

Տիգրան Պետրոսեանը վախճանեց 1984 թականին: ■

Համարեց՝ Առլետ Վարդումեանը

☆☆☆

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

«**ՔՈՏԱՖՈԳՕ**» (Ռիօ դէ ժանէյրօ) Ակումբը հիմնել է 1904թ.: Մարզադաշտը «Բոտաֆոգօ» (24.000), կարեւորագոյն խաղերն անցկացնում է «Մարականայում»: Գուանաբարա նահանգի բազմակի չեմպիոն: Լաւագոյն խաղացողները Գարինչա, Ն. Մանթոս, Դիդի, Վաւա, Չագալօ, Ամարիլիօ, Ժաիրզինեօ, Պ. Յեզար, Դիբուեու, Գերսօն, Ալեմաօ, Ժոսիմար եւ ուրիշներ:



ՔՐԱԶԻԼԻԱ- Ազգային Ֆուտբոլը ղեկավարող սպորտի կոնֆեդերացիան ստեղծել է 1914թ.: ՖԻՖԱ-ի անդամ է 1923-ից: Խոշոր մարզադաշտերը «Մարականա», («Մարիօ Ֆիլեօ», Ռիօ դէ ժանէյրօ)՝ 151.000, «Մորումբի» (Ման Պաուլու)՝ 145.000: Երկրում կայ 1.000.000 Ֆուտբոլիստ, որից 28.000-ը՝ արհեստավարժ:

Բրազիլիայի հաւաքականը (մարզագլխաւոր՝ դեղին մարզաշապիկ կանաչ օձիքով, կապոյտ վարտիք, սպիտակ զանգապաններ) 1958, 1962, 1970 եւ 1994թթ. աշխարհի չեմպիոն է, 1950թ. առաջնութեան 2-րդ, 1938-ին, 1978-ին՝ 3-րդ մրցանակակիր, Հարաւային Ամերիկայի քառակի չեմպիոն: Միակ հաւաքականն է, որ մասնակցել է աշխարհի բոլոր 15 առաջնութեան եզրափակիչ փուլերի մրցումներին: Բրազիլիական Ֆուտբոլին բնորոշ են գնդակին տիրապետելու թեթեւութիւնը, կատարեալ տեխնիկան, արտիստականութիւնը, յղկած փոխանցումները:



Առաջատար ակումբներն են «Մանթոսը», «Ման Պաուլուն», «Պալմէյրասը», «Ֆլամենգօն», «Ֆլումինենսէն», «Բոտաֆոգօն»: Լաւագոյն խաղացողները Պելէ, Գարինչա, Լեոնիդաս, Բաուեր, Տիմ, Ադեմիր, Ժուլիանօ, Ջիզինեօ, Ժաիր, Ժիլմար, Ն. Մանթոս, Չ. Մանթոս, Վաւա, Դիդի, Չագալօ, Ջիտօ, Բելլիմի, Ամարիլիօ, Ժաիրզինեօ, Ռիվելինօ, Տոտաօ, Գերսոն, Կ. Ալբերտօ, Սոկրատես, Ջիկօ, Ֆալկաօ, Կարեկա, Ռոմարիօ, Բերետօ, Տաֆարել, Ժորժինեօ, Ռաի, Դունգա եւ ուրիշներ: Լաւագոյն մարզիչները՝ Ֆ. Կոտա, Չ. Մորէյրա, Ֆելա, Ա. Մորէյրա, Չագալօ, Մանտանա, Պարէյր եւ ուրիշներ:

ՔՐԱՅՐՆԵՐ ՊԱՌԻԼ (ծնւ. 1951թ. ԳՖՀ)- Չալս պաշտպան, բազմակողմանի գործող Ֆուտբոլիստ: Հանդես է եկել Միւնխենի «Բայերն», Մարքիոյի «Ռէալ» եւ այլ քիմերում: Ազգային հաւաքականում անցկացրել է 48 խաղ 1974թ. աշխարհի չեմպիոն, 1982-ի 2-րդ մրցանակակիր, Եւրոպայի չեմպիոն (1972), Եւրոպայի չեմպիոնների գաւաթակիր (1974):■



ՆՈՅԵՄԲԵՐ

Երոպացիների ու հայոց այս ամսւայ անունը հանգում է լատիներէն november բառին, որ բուն նշանակում է «իններորդ» (novem «ինը»): Ծաւալուն ձեռով ամիսը կոչում էր november mensis «իններորդ ամիս»: Եւ նոյեմբերը հռոմէացիների իրօք իններորդ ամիսն էր, եթէ առաջինը մարտը հաշուենք:

Անգլիացիներն այս ամիսը կոչում են November, որը Ֆրանսիացիները՝ novembre, գերմանացիները՝ November: Դժար չէ նկատել, որ սրանք գրեթէ նոյնութեամբ համապատասխանում են լատիներէն սկզբնաձեւին: Սակայն մի փոքր այլ է վիճակը հայերէնում (ՆՈՅԵՄԲԵՐ): Թւում է, թէ այս երկուսն իրենց առաջին մասով ատելի շուտ տառադարձութիւնն են յունարէն ՆՈՅՄԵՐԻՍ ձեւի, որն իր հերթին նոյնպէս փոխառութիւն է լատիներէնից:



Հետաքրքիր Հայկականը

Հին Հայկական ամսանունները

Հին հայերը առաջնորդել են Բուն Հայկայ թիականով, ըստ որի տարին ուներ 12 ամիս (հրաքանչիւրը՝ 30 օրով) եւ 13-րդ (լրացուցիչ) մէկ ամիս (5 օրով): Ահաւասիկ Բուն Հայկայ օրացոյցը.

Նաւասարդ	
Հոռի	Արեգ
Մահմի	Անեկան
Տրէ	Մարերի
Քաղոց	Մարգաց
Արաց	Հրտոից
Մեհեկան	Աւետեա

Հայոց ամսանունները դիցաբանական ծագում ունեն: Որոշ տոմարագէտներ գտնում են, որ հայոց տոմարի ամիսները կոչւել են Հայկ Նահապետի 12 ուստրերի եւ դուստրերի անուններով:



Եկէք Ժպտանք

Բժիշկը՝ իր ծանօթին.

- Կինս այսօր պէտք է գնայ քիթ- կոկորդ- ականջի- բժիշկի մօտ:
- Ինչո՞ւ: Չէ՞ որ դուք էլ նոյն մասնագիտութեան բժիշկ էք:
- Այո՛, բայց ես բուժման համար շատ եմ վերցնում:



Ծանր հիւանդի մահաճակալի մօտ բժիշկները կարծիքներ էին փոխանակում:

- Նրա սիրտը հիանալի է:
- Այո, թոքերը եւս առողջ են:
- Լեարդի գործունէութիւնը լրիւ նորմալ է:
- Ստամոքսը՝ նոյնպէս:

Հիւանդը, հաւաքելով վերջին ուժեր, մարդ ձայնով ասում է.

- Եթէ ձեզ ճիշտ հասկացայ, ուրեմն, ես մեռնում եմ լրիւ բուժած:



- Ինչի՞ համար են հարկատու բժիշկները, եթէ այժմ այս-քան շատ բժշկական գրականութիւն կայ,- ասում է տի-կիններից մէկը անանի բժիշկի ներկայութեամբ:

- Չգոյշ դատեցէք, տիկին,- նկատում է բժիշկը ժպտալով:- Գրքով դեկլարուելիս դուք կարող էք մեռնել տեքստում սպրդած որեւէ վիրիպակի պատճառով:



- Շատ եմ խնդրում, բժիշկ, գաք մեզ մօտ,- հեռախօսով ասում է տիկին Լուիզան,- ամուսինս տանջում է կոյր աղիքի նոպաներից:

- Յիմարութիւններ էք դուրս տալիս,- գոռում է կէսգիշերին արթնացած բժիշկը:- Անցեալ տարի եմ համել ձեր ամուսնու կոյր աղիքը: Երբէք չեմ լսել, որ մարդ երկու կոյր աղիք ունենայ:

Իսկ երկրորդ ամուսին ունենալու մասին դուք լսե՞լ էք, բժիշկ:



Նշանատու պրոֆեսորի երիտասարդ բժիշկ որդին ասում է հօրը:

- Պատկերացնո՞ւմ ես, ես բուժեցի այն կնոջը, որը տասը տարի քո այցելուն է եղել:
- Նա դրան լրիւ արժանի է, չէ՞ որ նրա փողերով ես կրթութիւն ստացել:



Հայկական խոհանոց

Նախուտեստներ



Սոխով եւ Սխտրով

12 գլուխ սոխը, 4 գլուխ սխտրը մաքրել, եփել աղաջրում մինչեւ փափկելը: Սոխի միջուկները հանել եւ 4 գլուխ սխտրի հետ ծեծել: 2 ճաշի գդալի բուսական իւղ, 1 թելի գդալ սեւ պղպեղ, մանր կտրատած կանաչին ծեծած սխտրի հետ խառնել, ապա գդալով լցնել սոխի գլուխների մէջ: Շարել ցածր, լայն կաթսայի մէջ, դնել ջեռոցը, պահել 15 րոպէ (մինչեւ կարմրի): Մատուցել սառը վիճակում:

Հազարով (Մարոլ)

Հազարի տերեւները առանձնացնել, լանայ, կտրատել, լցնել ամանի մէջ: Առանձին ամանի մէջ կտրատել գլուխ սոխը եւ համեմել աղով, խառնել, լցնել հազարի վրայ: Կանաչ պղպեղը, լոլիկը օղակաձեւ կտրատել, շարել հազարի վրայ: Բոլորի վրայ լցնել ձեթ եւ քացախ:

Սմբուկով

Սմբուկը մաքրել կեղեւից, օղակաձեւ կտրատել, աղ անել, 10-12 րոպէից քամել եւ տապակել խոլով: Կաթսայի մէջ լցնել մանր կտրատած ընկոյզ, մաղադանոս, աղ, պղպեղ, 30-40 գդալ տաք ջուր, քիչ քացախ, եռացնել, թողնել սառչի: Մատուցելիս լցնել սմբուկի վրայ:■

Ժամանց

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 10

Կազմեց՝
Կ. Տ. Յովհաննիսեան

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Մտահոգիչ երեւոյթ թէ՛ Հայաստանում եւ թէ՛ սփիւռքահայ որոշ գաղութներում - աշակերտուի:
- Հայ թատրոնի մեծագոյն դերասան (1849- 1891) - գոյներից:
- Ուտելիք - ասպրանքի վրայ դրոշմաւոր պիտակ- սառը զէնք:
- Հայ ազգային մեծ հերոս - ժողովրդական՝ սիրելի - այլ իմաստով իշխանութիւն:
- Փոքրիկ երկիր ԱՖրիկայում Մուզամբիկի հարեւանութեամբ (անգլիական ապաստանութեամբ) - 3. 14:
- Ծանր կարիք, տառապանք - վայրի ու ընտանի կենդանի - երբ ջուրը 100 աստիճան է:
- Ֆրանսիացի նշանաւոր գրող (1840- 1902) - արական անուն:
- Յարատեւման մեծագոյն ազդակը- մանր դրամ - հերքել:
- Կրկնաձեւ բաղաձայն - ժողովրդական՝ մահ- նախադատութեան մէջ իր հետ կապուող որեւէ անդամի հետ շարադասուող:
- Առանց խնայողութեան - երկնիչ թիւ:
- Որեւէ աման ծածկող դռնակ - ծածուկ հետեւել, լսել:
- Անհատ - ցանկալի երեւոյթ զէր անհատների համար:
- Նաեւ՝ յուսահատուել, մի բանից հրաժարուել - գոյութիւն ունեն աջից... - կատուացելի ընտանիքին պատկանող գազան:
- Հետք - եւրոպական մի ժողովրդի կապուող - պրոտէինով հարուստ բոյս:
- Ուժերի լարում, ջանք - իգական անուն - խիզախ, հերոս:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1									■						
2		■								■					
3				■							■				■
4					■		■				■	■			
5											■			■	
6	■							■							
7		■		■					■		■				■
8					■					■					
9			■					■							■
10							■					■			
11								■							
12		■			■							■			■
13						■				■					
14			■								■	■			
15				■											

ԼՈՒՅԵՔ
ԽԱՉԲԱՌ

ՍՏԱՅԵՔ
ՆԻՐ

ՈՒՂԱՐԱՅԵԱՑ

- Որոշում կայացնելու տեսակէտից թոյլ, տատանող - աչքերի խոռոչը ակնաբուն:
- Այլ իմաստով ցանկութիւն, իղձ - իգական օտար անուն - մօր անամումներից:
- Առանց որի գոյութեան հնարաւոր չէ որեւէ երկիր ներմուծումների իրագործումը - ծեծող:
- Յուցական դերանուն երկու կողմից - միջազգային կազմակերպութիւն - Արմեանի ծննդավայրը:
- Մեխ - քիմիական ցանցառ տարի - լաւ է չկայ վերջին տառը, թէ չէ կոտորածը կատարեալ կը լինէր - ժողովրդական՝ լոյս:
- Ամառային կացարանին կապուող - ձայնանիշ է:
- Վարելու միջոց - բարբառական՝ կուչ գալ, կծկել - «... ես կեռանալ մի...»:
- Գրեմական պիտոյք - ժխտական ածանց - խորհրդանշող բառ ընդհանադիր իմաստով:
- Սառը զէնք - նաեւ իդէալական:
- Իրանի քաղաքներից - մարմին, բաղադրութիւն:
- Անիւ - ազատագրել, կաշկանդել:
- Մեծ մայր - եւրոպական գետ, որ այստեղ հոսում է հարաւից...- առարկայի դուրս ցցած մասը:
- Բռնիչ գործիք - կանխավճար- դուրս հոսող, թափուղ:
- Ուժգին - դէմք - արական պատմական անուն:
- Հայկական վերջածանցներից - ներկայում մեծ դեր ունի օդի ապակառնութիւնը վերացնելու մէջ - ընտանի կենդանու ձագ - ցածից ուղքի ոսկորներից:

Խաչքառ համար 8-ի
լուծած տարբերակը
տեսնել՝ էջ 25-ում:

ԴԻՆՈՂԱԻՐԻ ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐԸ

(Գիտական Ֆանտաստիկա)

Պրոֆ. Ռ. Ղազարեան

Անառային Արեւը, յաղթահարելով իր երկնային երթուղու կետը, արդեն սկսել էր վայրէջքը դեպի հորիզոն, երբ նրանք մօտեցան ժայռածալքում սքողած քարայրի մուտքին:



- Ուշադիր կը լինես,- հանգիստ առօրեական տոնով արտասանեց Միքայելը,- մեկ էլ տեսար որեւէ օձ կամ կարիճ մեզ ողջունել ցանկացաւ:

- Դրանք հէ՛չ, միայն թէ առնետ դուրս չարձնի ոտքերիս տակից... սիրտս կը պայթի տեղնուտեղը,- ընդունելով նրա տոնն արձագանքեց Մուշեղը: Նա չէր կեղծում. մի անգամ, տեղի տալով Միքայելի հորդորին, նրա հետ գնացել էր օձի որսի և զարմանքով ի յայտ էր բերել իր մէջ օձերի նկատմամբ նողկանքի իսպառ չքացում: Մինչդեռ ամենտների տեսքի ջղացնցում հարուցող զարշանքին վերջերս գումարել էր համարեա միտոսիկական երկխոլա-ծութիւնը, երբ կարդացել էր նրանց կենսաբանական ապ-շեցուցիչ յարմարողականութեան և վերլուծական ունա-կութիւնների մասին:

- Պատկերացրո՞ւ նրանց էլ կարելի է ընտելանալ-ծպտաց Միքայելը.- Բաստիլի մենախցում 20 տարի անց-կացրած մի Ֆրանսիացու մենութիւնն ամոքել են այդ բանտում վիստացող առնետներից մի քանիսը, որոնց մա ընտելացրել էր:

-Վ՛վ՛վ՛,- ցնցելով եզրափակեց Մուշեղը: Նա աշխա-տում էր յետ չմնալ ժայռածեղք-միջանցքով առաջ շարժ-ւող Միքայելից: Անձաազիտութիւնը Միքայելի նոր տա-րերքն էր: Այն արթնացել էր Ազոխի անձամների այցելու-թիւնից յետոյ: Հիացմունքով էր նկարագրում նրանց հեքի-աթային գեղեցկութիւնը: Որոշել էր շրջել Հայաստանի միւս անձամները, այնպիսի ոգեւորութեամբ էր խօսում այդ մասին, որ Մուշեղի համար շատ շուտ պարզ դարձաւ՝ իր կողմից ճակատագրական սխալ կը լնի բաց թողնել առիթը և չմասնակցել արշախին:

Միջանցքը գնալով նեղանում էր ցածրանում էր, այն-պէս որ Միքայելը ստիպւած եղաւ կռացած առաջ շարժու-ւել: Մի փոքր անց կռացաւ նաեւ Մուշեղը: « Միայն թէ չըս-կըսի », գլուխ բարձրացրեց արշախի սկզբից հոգու խոր-քում դարանակալած ահը... « Միայն թէ չսկսի », նորից մտովի աղերսեց նա, աշխատելով խցանել աճող տագնա-պը, « կը խայտառակեմ Միքայելի առաջ...»: Նա սկսեց քթի տակ ինչ որ գարթ եղանակ դնո՞ւնալ, նախկին փոր-ձից գիտակցելով, որ եթէ բաց թողեց պահը, այլես անգոր կլինի իշխել իրեն և այն ժամանակ կը կատարուի սարսա-փելին...: Առաջին անգամ դա պատահեց երբ տարը տա-րեկան երեխայ էր: Տապկնոցի էին խաղում: Աշտոի և Արմենակի հետ վազեցին շինարարական ընկած մե-տաղեայ լայն խողովակի երկու ելքը: Եւ յանկարծ Մուշե-ղը գիտակցեց, որ չի կարող ոչ առաջ շարժուել, ոչ յետ, ոչ էլ կարող է կանգնել կամ անգամ մտել: Կենդանական սարսափն ասես պայթեց ուղեղում: Նա խելակորոյս այնպիսի ճիչ արձակեց, որ տղաները շամպայնի խցան-

ների մնան դուրս նետեցին խողովակից, իսկ նրանց հե-տեկից հապշտապ դուրս սողաց Մուշեղը՝ աչքերում սար-սափի ճիչ: Ու, հենց որ ազատեց խողովակի գերութիւ-նից, ամօթից գետինը մտաւ. փնթփնթաց ոտքի անսպա-սելի սուր ցաւի մասին և սուտ կաղալով հեռացաւ տղա-ների տարակուսած հայեացքների ուղեկցութեամբ: Վախը մնաց: Երբեմն այն արթնանում էր լեփ-լեցում տրանսպորտում կամ վերելակում: Այդպիսի դէպքերում Մուշեղն աշխատում էր կանխել նրա բռնկումը՝ դուրս էր գցում իրեն առաջին իսկ կանգառում: Տարիներ անց իմացաւ այդ հոգէվիճակի գիտական անւանումը՝ փակ տարածութեան վախ:

Տագնապն արագօրէն աճում էր. Մուշեղը, իրեն հա-մար աննկատ, արդէն երգում էր բարձրաձայն ու զգում՝ ջանքերին իզուր են... Հիմա կը ճչայ: Եւ , հենց այդ պահին Միքայելը, կարծես կռահելով նրա վիճակը հանգիստ, մի փոքր զարմացած ասաց.

- Կարծես հասանք, բայց չեմ հասկանում՝ դա ի՞նչ լոյս է առջետում...

Մուշեղը, հանգստանալով և ուշքի գալով, նայեց առաջ. այնտեղ, մի քանի մետրի վրայ, առկայածում էր ոչ պայ-ծառ, սակայն ցերեկայինի մնան լոյս: Միքայելն անջա-տեց լապտերիկը: Մի քանի քայլ եւս և նրանք յայտնուեցին բարձր կամարով բաւական ընդարձակ անձառում: Կա-մարի աջ անկիւնում՝ փոքր անցքից, թափանցում էր դրսի լոյսը, բաւականաչափ լուսատրելով անձառի ներքը:

- Անձառը լեռան հարաւային լանջի տակ է,- ասաց Միքայելը: Հաւանաբար խորը չէ՝ անցք է բացել:

Միքայելի տոնի մէջ Մուշեղը հիասթափութիւն զգաց: Ուզում էր ինչ որ ձեռով սփռուի աւագ ընկերոջը: Թափա-ռող հայեացքով զննում էր անձառի ներքը՝ որտէ հե-տաքթերը բան գտնելու յոյսով: Ուշադրութիւնը գրաւեց անցքի դիմացի լուսատրած պատը. այն ուղղաբերձ ժայ-ռի մի մասն էր կազմում: Չարմանալի հարթ էր, թէև ու-շադիր հայեացքի ներքոյ նշմարում էր թեթեւ ալիքաու-րութիւն: Ներքեւում՝ յատակի մօտ, վերջանում էր կռահ-կաձեւ գոյացումով, կարծես քանձր ինչ-որ զանգած սա-ռելով հոսել է պատն ի վար ու կարծրացել: Մուշեղը գը-լուխը շրջեց Միքայելի կողմը՝ ուզում էր խօսել տեսածի մասին: Վերջինս, համակ ուշադրութեամբ հայեացքը գա-մել էր նոյն պատին:

- Ինչպէս ընդունում է արտայայտել քո ընկերների շրջանում,- սկսեց Միքայելը, և Մուշեղը նրա թեթեւ հեզմա-կան տոնի մէջ յուզմունք որսաց,- զգա՛ ա՛յս պահը...

Վերջին խօսքերը Միքայելն արարեց բեմական հան-դիսատրութեամբ:

- Մենք քեզ հետ տեսնում ենք,- արդէն սովորական տոնով շարունակեց նա,- միլիոնատր տարիներ առաջ տեղի ունեցած հրաբխային գործունէութեան ստառձ ակնթարթը: Ուշադիր նայիր կամարին... ի՞նչ կասես:

Մուշեղը հայեացքը յառեց վեր, սակայն իրեն հե-տաքթերը ոչինչ չնկատեց: Դիշտ է, առաստաղի մէջ ա-ռանձնանում էր մի հսկայ ժայռակտոր... բայց դա ի՞նչ անսովոր բան է որ: Նա ուները տարակուսանքով թոթեց: Միքայելը ճիշտ մեկնաբանեց այդ ծեստը:

Երիտասարդի համար

- Ես այս ամենը կը բացատրեի այսպէս. ժայթքումն ուղեկցող երկրաշարժը հսկայ ճեղք է բացել սարի մէջ. մենք հէնց այդ ճեղքով անցանք այստեղ: Բացում ուղղաբերձ լանջով վերեւից հոսել է մագման և սառել: Աւելի ուշ, կրկնող ցնցումներից մէկի ժամանակ, սարից պոկւած ժայռաբեկորը ճեղքը փակել է վերեւից՝ առաջացնելով այս կամարը: Յետագայում վերեւից այն ծածկել է հողի շերտով:

- Այնպէս համոզուած ես խօսում, կարծես ներկայ ես գտնել,- տարակուսանքով արձագանքեց Մուշեղը, ջրաքցընելով, սակայն, իր հիացմունքը. « Կեանքում գլխի չէի ընկնի», մտքում խոստովանեց նա: Այժմ, արդէն Միքայելի վարկածի տեսանկիւնով էր զննում անձաւի ներսը: Մասնատրապէս նկատեց, որ յատակը եւ նոյն հիւթից է ինչ և դիմացի պատը:

Այդ ընթացքում, անցքից ներս ընկնող լոյսը գնալով պայծառացաւ ընդունելով կանաչաւուն երանգ. հաւանաբար արեւը հասել էր անցքի դիմահայեաց կէտին: Պայծառ լուսափունջը, կոնաձեւ լայնամալով լուսաւորեց դիմացի պատը: Եւ նոյն վայրկեանին քարանձաւում յայտնեց... Մի հսկայ կանաչաւուն հրէշ: Դա այնքան անըստապատեհի ու անհարկու էր, որ Միքայելն ու Մուշեղը բնագոյրաբար կպան պատին ու քարացած մնացին, անգոր անգամ ծպտուն հանելու: Չորքոտանի հսկան երկարավիզ էր՝ գլուխը կայուն էր առաստաղին: Առջեւի ոտքերն արեւի երկար ու բարակ էին, քան ետեւիները: Պոչը հաստ էր, և ընդհուպ մօտենում էր տղաներին: Մակայն այստեղ դառնում էր անտեսանելի՝ կարծես լուծելով օդում: Գլուխը համեմատաբար փոքր էր. լայն բացած երախը՝ լեւի-լեցուն հսկայ ատամներով: Չայն չկար, սակայն հետագայում, մանրամասները վերլիչելիս, տղաները եկան ընդհանուր եզրակացութեան՝ հսկայի տեսքն արտայայտում էր օրհասական մտունջ: Ահագոյր այդ տեսիլքի մէջ մի տարօրինակ առանձնայատկութիւն կար. կենդանու ուրուզը-ծերը յստակ չէին՝ մի տեսակ ճապաղուած էին, աղոտ, ասես կիզակէտից ընկած կինօ կամ հեռուտապատկեր լինէր:

Տեսիլքը տեսեց մի քանի վայրկեան ու չքացաւ... Մի-ամժամանակ դեռ անշարժ ու շշմած, տղաներն աչքերը պլշել էին իրենց առջեւ նոր անակնկալների սպասումով: Մակայն վայրկեաններն անցնում էին. անձաւը մնում էր դատարկ ու խաղաղ, ուստի մեր արկածատէր հերոսները մի փոքր շունչ առան և կասկածոտ միմեանց նայեցին, կարծես համոզուելու, որ այդ ամենը պատրանք չէ՝ միսն էլ է տեսել:

- Այսօր այլեւս չի երեւայ,- շփոթեց Միքայելը:
- Որտեղից գիտես,- նոյնպէս շշուկով հարցրեց Մուշեղը:

- Արեւն արդէն անցել է անցքի վրայով, մէկ էլ վաղը... կամ ուղիղ մէկ տարի անց:

Տակաւին յուզած Մուշեղը մի բան միայն հասկացաւ. դա գերբնական երեւոյթ չէր՝ Միքայելն ինչ-որ չափով հասկացել է նրա բնոյթը, դա արեւի հանգստացրեց իրեն: Մուշեղը հարցական նայեց Միքայելին:

- Արևը պէտք է ճիշտ անցքի դիմաց գտնի, որ ճառագայթներն ուղիղ ներս ընկնեն: Քանի որ արեւի քարձրութիւնն օրեօր նուազում է, ասպա նոյն դիրքը մէկ էլ

կը կրկնի միայն յաջորդ տարի..., և դիմագաւրը նորից կը յայտնի...

- Դա բրայխոզաւի էր Միքայել,- գրգռուած վրայ բերեց Մուշեղը,- հայրիկիս հետ տեսանք նրա կմախքը Բեռլինի քանդարանում... նա արեւի մեծ էր՝ 12 մետր բարձրութիւն ունէր...- Մուշեղը մի պահ լռեց ու արեւացրեց,- բայց ինչպէ՞ս նա յատնեց այստեղ, Միքայել...
- Մանրամասները դեռ ինձ էլ պարզ չեն... Անկասկած է մի բան՝ սա,- Միքայելը մատնացոյց արեց դիմացի պատը,- հողորամա է: Բայց շարժենք, ճանփան երկար է, կը խօսենք:

Նա շարժեց դէպի անձաւի մուտքը: Մուշեղն անմիջապէս հետեց նրան, ցուշատրութեամբ ետ նայելով, սակայն այնպէս, որ Միքայելը չնկատի:

Մինչև մութն ընկնելը պէտք է հասնէին Կապան, այնտեղից ինքնաթիռով՝ Երեւան: Վաղը Մուշեղին ասպասում էր դպրոցը, Միքայելին՝ բուհը:

Ինքնաթիռից ուշացան, ստիպուած զիշերեցին հիւրանոցում: Քնի մէջ Մուշեղին հետապնդում էին անկապ երազներ: Գիշերայ մօտ ժամը երեքն էր, արթնացաւ: Անմիջապէս վերլիչեց տեղի ունեցածը: Քունը իսպառ չքացաւ: Մենեակն աղօտ լուսատուրած էր պատուհանից ներս ընկնող փողոցային լապտերից: «Այստեղ էլ մի բան չյայտնի», մտքում կատակեց նա՝ հայեացքն ուղղելով իր առջեւ: Դիմացի մահճակալի մէջ ծալապատիկ նստած էր Միքայելը: Կարծես սպասում էր Մուշեղի արթնանալուն:

- Մո՛ւշ...

- Հը...
- Ոնց որ թէ հասկացել եմ... ուզո՞ւմ ես լսել:

Մուշեղը, պատասխանի փոխարէն նոյնպէս նստեց մահճակալին:

- Յիշո՞ւմ ես, քարանձաւի առաջացման իմ վարկածը...

- Հրաքիսի ժայթքումն ու երկրաշարժը՞:

- Այո՛: Մնում է ենթադրել, որ այն տեղի է ունեցել տասնեակ միլիոնաւոր տարիներ առաջ... երբ դեռ կենդանի էին դիմագաւրերը:

- Ընդունենք...

- Հէնց այդ աղէտի ժամանակ, երբ մեր անձաւը դարձել էր սառչող մագմայով լի կաթսայ, նրա մէջ ընկել է բրայխոզաւը... և, մինչեւ տաք մագմայի մէջ սուզուեթաղուելը, մահատագնապ ու ցուրտանց ռոնացել է:

Մուշեղը պատկերացրեց մագմայի մէջ դանդաղ սուզուող ու խորովող հսկային. ակամայ սարսուռ զգաց:

Այժմ ողբերգութեան զագաթնապահը,- Միքայելը կարճ դադար տուեց,- զագանի ռոնոնցն այնքան հրէշատոր էր, որ տակաւին մաժուցիկ մագմայաձածիկ ժայռապատին դրոշմեց դիմագաւրի ձայնային պատկերը կամ հողորաման: Դրա համար պէտք էր, որ այդ պատի վրայ միաժամանակ ընկնէին 2 ձայնային ալիք. մէկն անմիջականօրէն՝ հրէշի երախից, միւսը՝ դիմացի պատից անդրադառնալուց ու զագանին ողողելուց յետոյ: Այդ երկու ալիքը փոխազդելով ստեղծեցին մագմայի վրայ դիմագաւրի ինտերֆերենցիոն պատկերը կամ հողորաման...

- Ասում ես ձայնային պատկերը,- տարակուսեց Մուշեղը,- բայց չէ որ մենք տեսանք աչքերով...

Երիտասարդի համար

- Այո՛: Յայտնի է, որ եթե այդպիսի ձայնային հոլոգրաման լուսատրոի միագոյն լոյսով, ապա տարածութեան մէջ կը յայտնուի նկարած իրի ծաւալային պատկերը:

- Իսկ ինչո՞ւ պատկերը յստակ չէր:

- Որովհետեւ ընկնող լոյսը մաքուր միագոյն չէր: Դու, անշուշտ, նկատեցիր, որ այն կանաչ երանգ ունէր... Արեգակի բազմագոյն լոյսը ներս ընկաւ կանաչ տերեւների միջով, որոնք եւ գտեցին կանաչը: Բայց տերեւներն այնքան էլ որակեալ գոհչներ չեն: Այ, եթէ պատի հոլոգրաման լուսատրոի լազերի չափազանց միատեղ լոյսով, պատկերը շատ յստակ կերեայ:

- Ուրեմն, մեր դժբախտ քրախիտգարը, յամենայն դէպս հասցրեց լուսանկարել:

- Այնքան էլ դժբախտ չէ, քանի որ դա միայն նրան է յաջողել... Առայժմ ուրիշ այդպիսի ինքնադիմանկար չի յայտնաբերուած:

- Տղաներին պատմեմ, կասեն՝ կամաց փչի, մոնը կը յանգցնես,- նախապէս վրոզվելով եզրակացրեց Մուշեղը:

- Իսկ մենք չենք շտապի,- ասաց Միքայելը:- Կը բերենք նկարահանման տեսախցիկ եւ վկաներ. կարծում եմ ինձ կը յաջողի համոզել տղաներին: Յետոյ կը զեկուցենք: Պատկերացնո՞ւմ ես, ինչ սենսացիա: Կենդանի դիմոզարի ծաւալային պատկեր և ոչ թէ կմախքի հիման վրայ ենթադրական վերականգնածքը...

Յաջորդ շարք չկարողացան գալ՝ եղանակն անբարենպաստ էր: Յետոյ անիմաստ կը լինէր՝ արեգակի բարձրութիւնը պակասել էր: Որոշեցին լաւ պատրաստուել եւ միւս ամառ... Աւա՛ղ... դուք անշուշտ յիշում էք այն տարւայ գարնան ուժեղ երկրաշարժը Կապանի շրջանում... Երբ եկան՝ ոչ ժայռածալքը կար, ոչ մուտքը... Ձեկոյցը դառաւ անիմաստ՝ ոչ մի փաստ չունէին:

Գաղտնիքը մնաց երկու ընկերների միջեւ ու, իրենց համար աննկատ, աւելի մտերմացրեց նրանց: Ամէն անգամ, հանդիպելիս, նրանք նորանոր մանրամասներ էին վերյիշում, տխրութեամբ զիտակցելով կատարածի անկրկնելութիւնը: Ու, զարմանալի բան. քարանձաւում իրենց տեսած ճապաղ պատկերը հետզհետէ յստակեց եւ այդպէս յստակ էլ մնաց յիշողութեան մէջ:■

Հայաստանի հետ... Շար էջ 7-ից

Հայաստանն Իրանի համար եւս դարձել է լուրջ գործո՞ւմ եւ մեծապէս նպաստում է նրա ազդեցութեան պահպանմանը Անդրկովկասում: Այս ամէնը վկայում է, որ Թուրքիայի որդեգրած հակահայկական քաղաքականութիւնը չի նպաստում նրա դիրքերի ամրապնդմանը նաեւ Սերձաւոր եւ Միջին Արեւելքում: Մինչդեռ Թուրքիան տարածաշրջանային ազդեցիկ քաղաքական ուժ է: Բնականաբար տարածաշրջանում նրա դերը անհամեմատ մեծ է, քան Հայաստանինը, իսկ շահերն աւելի քան բազմակողմանի են:

Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորումը Թուրքիայի շահերից է բխում: Ուրեմն դա առաջին հերթին Թուրքիային է անհրաժեշտ եւ ոչ թէ Հայաստանին: Թուրքիան դրանով ձեռք կը բերի ոչ անբարեացակամ հարեւան իր արեւելեան սահմանում, միաժամանակ նոր շուկայ իր ապրանքների համար: Զգալի կը նազի նրա առճակատման հաւանականութիւնը Հայաստանի ռազմաքաղաքական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ: Ռուս-հայկական զինակցութիւնն այլեւ նրան չի անհանգրստացնի, իսկ Հայաստանը որպէս ազգային անվտանգութեան ապահովման միջոց կը ձերբազատուի թուրքական սահմանի պաշտպանածութեան մակարդակը մշտապէս բարձրացնելու պարտաւորութիւնից: Այսպիսով կը վերանայ Հայաստանի տարածքում տեղակայած ռուսական բազան ժամանակակից ռազմական նոր տեխնիկայով հագեցնելու անհրաժեշտութիւնը: Միաժամանակ Թուրքիան հայկական գործօնին բախելու փոխարէն կը համագործակցի Հայաստանի հետ: Արդիւնքում երկու երկրների յարաբերութիւնները դուրս կը բերեն ազդեցութեան գոտիների համար Անդրկովկասում ծաւալող ռուս-ամերիկեան մրցապայքարի ոլորտից: Եւ վերջապէս նախադրեալներ կը ստեղծեն, որպէսզի Թուրքիան մեղմի ոչ վաղ անցեալում ցեղասպանութեան ենթարկած հայ ժողովրդի անվտանգութիւնն իր նկատմամբ:

Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորումը ինքնաբերաբար կը նազեցնի թուրքական վտանգը Հայաստանի համար: Ուստի, կը նազի նաեւ ռուս-հայկական դաշինքի դերը թուրքական վտանգը չեզոքացնելու առումով: Այս պայմաններում Հայաստանն իր արտաքին քաղաքականութեան մէջ անկաշկանդ գործելու լայն հրմարտութիւններ ձեռք կը բերի: Թերեւս դրանով էլ կը թուլանայ անդրկովկասեան հանրապետութիւնների բեւեռացումը: Տարածաշրջանում կը ստեղծեն երկարածանկէտ խաղաղութեան եւ կայունութեան անհրաժեշտ նախադրեալներ: Միայն թէ Թուրքիան առաջնորդի տարածաշրջանի շահերով, բարի կամք դրսեւորի եւ հրաժարի Հայաստանի նկատմամբ իր որդեգրած բշտամական քաղաքականութիւնից:■

Համար 9 խաչբառի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Լ	Ե	Օ	Ն	Ա	Յ	Ի	Ն	Ո	Ա	Ռ	Ա	Ք	Ա	Ո
2	Ե	Ն	Ո	Ր	Լ			Ն	Ա	Լ		Ր	Ա	Տ	Օ
3	Գ	Ո	Ն	Ա	Ր	Ե	Լ	Վ	Ա	Ր	Ա				
4	Ե	Ր	Ք			Տ	Ր	Ա	Գ	Ք	Ր	Ե	Ն	Ա	
5	Ն	Ա			Տ	Ա	Ր	Ա	Գ	Ք	Ր	Ե	Ն	Ա	
6	Ո	Ն	Ե	Լ		Գ	Ա	Տ	Ի	Կ		Տ	Ր	Ք	
7		Ա	Վ	Ա	Գ	Ք		Ա	Ն		Ն		Ր	Ք	
8	Ա	Լ	Ի	Չ	Ա	Ն		Կ	Գ	Ա	Կ	Գ	Ա	Կ	
9	Ի	Ն	Ս	Ա	Ք	Ր		Ի	Ր	Ա	Վ	Ա	Չ	Տ	
10	Ա	Ն	Կ	Ա	Վ		Ո	Ն	Ր	Ա	Կ				
11		Ն	Ր	Ա	Ն	Ր		Ր	Ա				Ա	Ս	Ա
12			Վ	Ա	Ր				Վ	Կ	Ն		Ն	Ե	Տ
13		Ի	Ո	Գ	Ե	Ա	Կ		Ա	Գ	Ն		Ո	Ե	
14	Գ	Ո	Ս		Ա	Ր	Ր		Ա	Ր	Ն	Օ		Ա	Լ
15	Ի	Ր		Ս	Ն	Ո	Ն		Գ	Ի	Տ	Ո	Ն		

